Նալբանդյանի հասարակական-իրավաքաղաքական հայացքները

Նալբանդյանը հատուկ աշխատություններ, երկեր չունի նվիրված իրավաքաղաքական, պետաիրավական հարցերին, ուստի նրա իրավական աշխարհայացքը ընկալելու համար անհրաժեշտ է թեկուզ ընդհանուր գծերով կանգ առնել նրա գործունեության բնույթի և ընդհանուր աշխարհայացքային ընկալման վրա՝ կապված ժամանակաշրջանի մի շարք իրողությունների հետ: Նալբանդյանը ծնվել և որպես անհատ ձևավորվել է ռուս իրականության մեջ՝ մի երկրում, որտեղ գոյություն ուներ ***բացարձակ միապետական կառավարում և ճորտատիրական իրավունքի*** *վրա հիմնված սոցիալ-տնտեսական կարգեր: Այն դեպքում, երբ աշխարհի խոշոր երկրներում՝ Անգլիայում, Ֆրանսիայում վաղուց արդեն վերացել էր ճորտատիրական իրավունքը՝ Ռուսաստանում մի փոքրաթիվ խումբ՝ 127,1 հազար (1833թ. տվյալներով) կալվածատերեր (գյուղացիական ռեֆորմից՝ 1861թ.՝ առաջ), որոնք կազմում էին (իրենց ընտանիքներով հանդերձ) բնակչության ընդամենը 1%-ը, ստրկական՝ ճորտական վիճակի մեջ էին պահում 23,1 միլիոն (ճորտատիրական իրավունքի վերացման նախօրյակին) մարդու՝ կալվածատիրական ճորտ գյուղացիների: Ճորտատիրական իրավունքի վերացման՝*

գյուղացիական ռեֆորմի (1861թ.) նախօրյակին շուրջ 19 մլն. (1857թ.) մարդ էլ կազմում էին պետական գյուղացիները, որոնք նույնպես գտնվում էին ճորտական վիճակում (միայն թե ճորտատերերի դերում հանդես էր գալիս պետությունը) և շուրջ 2 մլն. (1,7), այսպես կոչված, արքունական (удельный) գյուղացիներ, ճորտեր[1]: 1856 թվականի տվյալներով Ռուսաստանի քաղաքային բնակչությունը կազմում էր 5.684 մարդ կամ բնակչության 8,9%-ը[2]: Երկրի բնակչության 9/10-րդ մասը կազմում էին գյուղացիները[3]: Ռուսաստանի բնակչությունը 19-րդ դարի 1-ին կեսին կազմում էր 74 մլն. մարդ[4]: Փաստորեն Ռուսաստանի բնակչության ու գյուղացիության կեսից ավելին ճորտ կամ էապես այս կամ այն չափով իրավազրկված անձինք էին, որոնք պարտավոր էին կատարել կոռ (барщина), այսինքն՝ աշխատավճարային ռենտա և բահրա (оброк)՝ բնամթերային կամ դրամական ռենտա, շնչահարկ (գլխահարկ) վճարել կալվածատիրոջը ևն: Պետա-

---

[1] Տե՛ս История СССР, XIX - начало XX в., Изд. “Высшая школа”, Москва, 1981, стр. 6-12, (23մլն. ճորտերից 10.700 հազարը արական սեռի , 19 մլն. ճորտերից 9.345 հազ. արական սեռի, 1,7 մլն.-ից 838 հազարը արական սեռի-Մ.Թ.)

[2] Տե՛ս ***Е.А.Мороховец,*** Крестьянская реформа 1861г., Государственное социально-экономическое издательство, Москва, 1937, стр. 21.

[3] Տե՛ս “История СССР…”, 1981, стр. 6.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 4: Այլ աղբյուրներում նշվում է նաև, որ 18-րդ դարի վերջերից մինչև 19-րդ դարի կեսը Ռուսաստանի բնակչությունը կրկնապատկվում է 36 մլն.-ից հասնելով 68 միլիոնի: Տե՛ս История СССР, под. ред. ***М.В. Нечкиной*** и др., т. 1, изд. социально – экономической литературы, Москва, 1964, էջ 595:

կան գյուղացիները չնայած պաշտոնապես համարվում են «գյուղական ազատ բնակիչներ», սակայն նրանք ևս ֆեոդալական կախյալ գյուղացիներ էին, որոնք ֆեոդալական բահրա և շնչահարկ էին մուծում պետություն-ֆեոդալին[5]: Համենայնդեպս զուտ «դասական» իմաստով կալվածատիրական ճորտերը 1861թ. գյուղացիական ռեֆորմի նախօրյակին կազմում էին երկրի ամբողջ բնակչության մոտ 1/3-ը[6]: Միքայել Նալբանդյանը ևս իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության (1862թ.) մեջ ճորտերի թիվը Ռուսաստանում համարում էր 23 միլիոն՝ մինչև 23.069,63 միլիոն, որից արական սեռի՝ 11.244,913 միլիոն, իգական սեռի՝ 11.824,718 միլիոն՝ ըստ 1858-1859թթ. տվյալների[7]: Ճորտատիրական իրավունքի՝ ֆեոդալական շահագործման դեմ ուղղված գյուղացիական հուզումները մշտական ու գնալով վտանգավոր բնույթ էին կրում: Եթե 19-րդ դարի առաջին քառորդում արձանագրվել էր 651 գյուղացիական հուզումներ (տարեկան միջինը՝26), ապա 19-րդ դարի երկրորդ քառորդում՝ 1089 (միջինը տարեկան 43) գյուղացիական ընդվզումներ[8]: Գյուղացիական հու-

---

[5] Տե՛ս “История СССР…", 1981, стр. 11-12.

[6] Տե՛ս История СССР, т. 1, под. ред. ***М.В. Нечкиной***, Изд. социально-экономической литературы, т. I, стр. 596.

[7] Տե՛ս ***Միքայել Նալբանդյան***, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985 էջ 474: Հմմտ. տե՛ս նաև Хрестоматия по истории СССР, т. III, Государственное учебно-педагогическое издательство Министерства просвещения РСФСР, Москва, 1952, стр. 7.

[8] Տե՛ս “История СССР…”, 1981, էջ 23:

*զումները շարունակվեցին նաև ճորտատիրական իրավունքի վերացման մասին 1861թ. փետրվարի 19-ի մանիֆեստից հետո, երբ գյուղացիները, անձնապես ազատ հայտարարվելով հանդերձ, պետք է ետ գնեին իրենց հատկացված հողատարածքները՝ մինչ այդ շարունակելով կատարել ֆեոդալական պարհակները[9]: Միայն 1861թ. ռեֆորմի տարում գյուղացիական հուզումները 1200-ի հասան[10]: Այդ հուզումների, ընդվզումների համար միայն 1861թ. սպանվել և վիրավորվել են 210, կալանավորվել՝ 1712, դատի տրվել՝ 1213, այլ պատիժների ենթարկվել՝ 4777, Սիբիր և այլ վայրեր աքսորվել՝ 220 գյուղացիներ ևն[11]: Ճորտատիրական իրավունքի վերացման ռեֆորմը իր հետադիմական կողմերով քննադատվեց ժամանակաշրջանի ռուս առաջադեմ գործիչների՝ **Ն.Պ.Օգարևի, Ա.Ի.Գերցենի, Ն.Գ.Չերնիշևսկու** և մյուսների կողմից[12]: Միքայել Նալբանդյանը ևս, իր վերը նշված աշխատության մեջ իր գա-*

---

[9] Տե՛ս История СССР, под. ред. проф. ***М.В.Нечкиной,*** т. II, Государственное социально-экономическое издательство, Москва, 1940, стр. 401-444, ***П.А. Зайончковский***, Отмена крепостного права в России, Госиздательство политической литературы, Москва 1954, стр. 115-116, ***Е.А. Мароховец,*** Крестьянская реформа 1861г., Москва, 1937, стр. 124-129, История государства и права СССР, ч. 1, Москва, 1985, стр. 206-210, ***И.А.Исаев,*** История государства и права России, Издательство “Юрист”, Москва, 1999, стр. 268-278, История КПСС, Политиздат., Москва, 1979, стр. 9-10, տե՛ս նաև Христоматия по истории государства и права России, “Издательство Проспект”. Москва, 2001, էջ 237-254:

[10] Տե՛ս *Мароховец,* նշվ. աշխ., էջ 126:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 129:

[12] Տե՛ս История СССР, т. II, էջ 427-443:

*ղափարական նախորդների ոգով քննադատելով 1861թ. փետրվարի 19-ի հրովարտակը, իր ետ գնման սկզբունքով գրում է. «Ո՛ւր երթա 23 միլիոն ժողովուրդ անհող և անկայան, ի՛նչ գործե, ինչպես ապրի: Նույն հողը, որի վերա բնակվում էր և որ գործում էր, այժմ, ազատվելուց հետո, պիտի վարձու առնուր յուր պարոնից. ի՛նչ ազատություն էր այս, ո՞չ ապաքեն և առաջ նույնն էր գործում, միայն այս տարբերությամբ, որ տված դրամը կամ անձնական աշխատությունը փոխանակ դրամի՝ համարվում էր **հարկ,** իսկ այժմ նույնը պիտի անվաներ **վճար»**[13]:*

Ճորտատիրական իրավունքի վերացման համար կազմակերպված պայքարը ավելի վաղ շրջանի պատմություն ունի: Դեկաբրիստների շարժումը, որն ավարտվեց 1825թ. դեկտեմբերի 14-ի Սենատի հրապարակում տեղի ունեցած արյունոտ իրադարձությամբ, ճորտատիրության դեմ պայքարի առաջին կազմակերպված ու նպատակամղված շարժումն էր: Ըստ որում, բացի ճորտատիրության վերացման պահանջներից դեկաբրիստներ՝ Պ.Ի.Պեստելը, Ն.Մ.Մուրավյովը և այլք առաջադրում էին ռուսական ամբողջ սոցիալ-տնտեսական, պետաիրավական համակարգը փոխելու, երկրում խորհրդարանական կամ սահմանադրական՝ սահմանափակ միապետական կարգեր՝ կառավարման ձևեր, ստեղծելու պահանջներ[14]*: Ռուսական կառավա-*

---

[13] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, էջ 475:

[14] Տե՛ս История СССР, XIX - начало XX в., Москва, 1981, ст. 62-70, История политических и правовых учений, изд. “Зерцало”, Москва, 1999,

ությունը Նիկոլայ I-ի (1825-1855) գլխավորությամբ սոսկ հանգցրեց խարույկը. դեկաբրիստների վառած կրակի չմարած կայծերի՝ գաղափարների վրա արդեն 19-րդ դարի 30-40-ական թվականներին սկսեցին ձևավորվել նոր խմբակներ, ձևավորվել նոր ազատագրական, հեղափոխական-դեմոկրատական գաղափարախոսություն, որի կրողների մեջ առավել պայծառ դեր խաղացին ***Վիսարիոն Գրիգորևիչ Բելինսկին*** *(1811-1848),* ***Ալեքսանդր Իվանովիչ Գերցենը*** *(1812-1870),* ***Նիկոլայ Պլատոնովիչ Օգարյովը*** *(1813-1877),* ***Նիկոլայ Գրիգորևիչ Չերնիշևսկին*** *(1828-1889): Այս մտածողների՝ հեղափոխական-դեմոկրատների գաղափարական ազդեցությունն ակնհայտ է հատկապես Նալբանդյանի աշխարհայացքի վրա: Ըստ որում,* ***Գերցենի, Օգարյովի****, ինչպես նաև նարոդնիկ («անարխիստ») Մ.Ա. Բակունինի հետ Նալբանդյանը անձնական սերտ կապերի մեջ էր գտնվում:*

Ռուս հեղափոխական-դեմոկրատներն առաջինն էին, որոնք անմիջապես ժողովրդին դիմեցին՝ վերացնելու ճորտատիրական իրավունքը, ապա նաև՝ ցարական ինքնակալությունը հեղափոխական՝ զինված համաժողովրդական պայքարի միջոցով: Սակայն, որպես արդարության, հավասարության, մարդու կողմից մարդու ամեն մի շահագործման դեմ ուղղված հումանիստական գաղափարնե-

---

ст. 471-477, История политических и правовых учений, под. ред. **В.С. Нерсесянца**, изд. “Юридическая литература”, Москва, 1983, ст. 348-355, Դեկաբրիստներ, Ընտիր երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1975, էջ 26-95, 173-277 ևն:

րի կրողներ, իրենց երկիրն ու ժողովրդին սիրող, ժողովրդի գործին անձնազոհորեն նվիրված անձինք, նրանք հասկանում էին, որ հեղափոխությունը, ապստամբությունը նաև իր հետ չարիք՝ արյունահեղություն, տառապանքներ է բերում և պայքարի այդ եղանակն առաջադրում էին միայն այն դեպքում, երբ այլ ճանապարհ չկար: Ինքնակալությունը համառորեն հրաժարվում էր փոփոխություններն իրականացնել վերևից: Վ.Գ.Բելինսկին անողոք ձևով քննադատում էր ոչ միայն ճորտատիրական իրավունքը, այլև տիրող ամբողջ պետական հասարակարգը՝ որպես «զանազան պաշտոնական գողերի ու կողոպտիչների հսկայակա՜ն կորպորացիա»[15]:

Ռուսաստանին կեղծ քարոզներ՝ կրոնական, քաղաքական ևն, պետք չեն, նրան անհրաժեշտ են բանական ողջամիտ, արդարացի գաղափարներ, իրավունքներ ու օրենքներ. «Նրան հարկավոր են այնպիսի իրավունքներ և օրենքներ, որոնք համապատասխան լինեն ոչ թե եկեղեցու ուսմունքին, այլ ողջամտությանն ու արդարացիությանը և դրանց ըստ հնարավորին խստիվ կատարումը: Իսկ դրա փոխարեն նա (Ռուսաստանը - Մ.Թ.) ներկայացնում է սարսափելի տեսարան մի երկրի, որտեղ մարդիկ վաճառում են մարդկանց (ակնարկում է ճորտատիրական իրավունքը – Մ.Թ.)՝ չունենալով դրա համար նույնիսկ այն արդարացումը, որից խորամանկորեն օգտվում են ամերիկյան պլանտատորները՝

---

[15] Տե՛ս ***Վ.Գ.Բելինսկի,*** Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. II, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 531:

պնդելով, թե իբրև նեգրը մարդ չէ… մի երկրի, որտեղ, վերջապես, ոչ միայն անձի պատվի և սեփականության ոչ մի երաշխիք չկա, այլև նույնիսկ ոստիկանական կարգ չկա, այլ կան միայն զանազան պաշտոնական գողերի ու կողոպտիչների հսկայակա՜ն կորպորացիաներ (ինչքա՜ն արդիական է հատկապես մեր օրերի բուրժուական կարգերի համար – Մ.Թ.): Ռուսաստանում այժմ ամենակենսական, արդիական ազգային հարցերն են. ***Ճորտատիրական իրավունքի*** *ոչնչացումը (ընդգծումն իմն է - Մ.Թ.), մարմնական պատժի վերացումը, ըստ հնարավորին խստիվ կատարումը թեկուզ այն օրենքների, որոնք արդեն կան»[16]: Գերցեն ամեն ինչ անում էր, ինչ կարող էր անել անհատ մտածող – լուսավորիչը՝ տարագրյալ այլախոհը՝ խաղաղ ձևով լուծելու ճորտատիրական իրավունքի վերացման հարցը՝ անգամ աղերսական նամակ գրելով Ալեքսանդր II ցարին (1855-1881)՝ փորձելով հեռու պահել երկիրը ապագա արյունահեղություններից: Բացատրելով իր «լիբերալ տատանվողականության» պատճառները՝ 1856թ. հոկտեմբերին նա գրում է, որ ինքը գերադասում է խաղաղ լուծումը հարցի, քանզի լավ հասկանում է արյունոտ հեղաշրջումների անցանկալիությունը և դրանով իսկ նա պարզապես զգուշացնում է. «…որ եթե ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ կալվածատերերը, ոչինչ չանեն, կանի կացինը: Թող թագավորը իմանա, որ իրենից է կախված, որպեսզի ռուս գյուղացին իր*

[16] Նույն տեղում, էջ 530-531:

գոտկատեղից չհանի այն»[17]: (ընդգծումը իմն է - Մ.Թ.): Իսկ «Յուրիի օրը…» թռուցիկում նա ուղղակի հայտարարում է, որ եթե կառավարությունը չազատի գյուղացիներին ճորտատիրական կապանքներից, ապա ինքն ուղղակիորեն կդիմի ժողովրդին ***կացնի դիմելու****, զինված պայքարի դուրս գալու ընդդեմ ցարական ինքնակալության[18]: Անգամ Չերնիշևսկին, որը հեղափոխական պայքարի կրքոտ կողմնակից էր և հաճախ էր քննադատում Գերցենին նրա «լիբերալիզմի» համար մեծ զոհունակությամբ է ընդունում իր գահակալությունից անմիջապես հետո Ալեքսանդր II-ի ձեռնարկած մի շարք քայլերը՝ ուղղված ճորտատիրական իրավունքի վերացմանը:*

Դեռ 1856թ. մարտի 30-ին Մոսկվայի ազնվականության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Ալեքսանդր II-ը, գնահատելով վիճակի վտանգավորությունը տիրապետող ուժերի համար, անհրաժեշտ և գերադասելի է համարում ճորտատիրական իրավունքի վերացման գործընթացի սկսումը ***վերևից****, քան թողնելը, որ այն վերացվի* ***ներքևից****: Այնուհետև հարցի նախապատրաստման համար Ալեքսանդր II-ի գլխավորությամբ 1856թ.*

---

[17] ***Ա.Ի.Գերցեն,*** Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. II, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 302-303, Տե՛ս նաև ***Վ.Հ.Բաղդասարյան,*** Ա.Ի.Գերցենի «Գյուղացիական սոցիալիզմը», Խ.Աբովյանի անվան հայկական մանկ. ինստիտուտի հրատ., Երևան, 1974, էջ 48-50:

[18] Տե՛ս История политических и правовых учений, под. ред. доктора юридических наук **В.С. Нерсесянца**. Издательство "Юридическая литература", Москва, 1983, ст. 361-362, Տե՛ս նաև ***Վ.Հ.Բաղդասարյան,*** Ալեքսանդր Գերցեն, «Հայաստան» հրատ., Երևան, 1977, էջ 144-158:

հոկտեմբերի 3-ին ստեղծվում է գաղտնի կոմիտե: Ալեքսանդրի կողմից 1852 թվականի նոյեմբերի 25-ին և 1857 թվականի դեկտեմբերի 5-ին կարգադրագրեր են տրվում նահանգապետերին ռեֆորմի նախապատրաստման համար ևն[19]*:*

Չերնիշևսկին, ողջունելով այդ քայլերը իր «Սովրեմեննիկ»-ում 1858թ. հրապարակված «Գյուղական կենցաղի նոր պայմանների մասին» աշխատությունում գոհունակությամբ. հույսով հայտնում է, որ այդ քայլերը՝ ճորտատիրական իրավունքի վերացումը միայն մեծ փառք կբերեն Ալեքսանդր II-ին[20]*: Սակայն հիասթափված 1861թ. փետրվարի 19-ի կիսատ-պռատ մանիֆեստից դրանից անմիջապես հետո 1861թ. «Կալվածային գյուղացիներին իրենց բարեկամներից ողջույն» կոչում ուղղակիորեն կոչ է անում ժողովրդին, գյուղացիներին, զինվորներին, համաժողովրդական զինված պայքարի դուրս գալու ցարական ինքնակալությունը ոչնչացնելու, գյուղացուն իսկական ազատություն տալու համար*[21]*: Նման կոչով ժողովրդին է դիմում նաև Ն.Պ.Օգարյովը 1861թ. հուլիսին «Կոլոկոլ»-ում հրատարակված իր «Ի՞նչ է անհրաժեշտ ժողովրդին» հոդվածում*[22]*, որը գրված է Չերնիշևսկու «Կալվածային գյուղացիներն...» ուղղ-*

---

[19] Տե՛ս Хрестоматия по истории СССР, т. III, Москва, 1952, ст. 58, История СССР, XIX - начало XX в., Москва 1981, ст. 128-129.

[20] ***Ն.Գ.Չերնիշևսկի***, Ընտիր երկեր, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1981, էջ 160:

[21] Նույն տեղում, էջ 584-597:

[22] Տե՛ս Хрестоматия по истории СССР, т. III, Государственное учебно-педагогическое издательство, с. 101-106.

ված դիմումի ոգով՝ թե՛ բովանդակությամբ, և թե՛ ձևով. «…Ժողովրդին անհրաժեշտ է հող և ազատություն: Առանց հողի ժողովուրդը չի կարող ապրել, նրան առանց հողի չի կարելի թողնել… Հողը ուրիշ ոչ ոքի, քան ժողովրդին չի պատկանում»[23]: Համանման տողեր, մտքեր մենք հետագայում կհանդիպենք նաև Նալբանդյանի «Երկրագործություն»-ում: Կառավարությանը հավատացինք և հիասթափվեցինք, չիրականացավ ինքնակալության կողմից՝ վերևից գյուղացուն իրական ազատություն տալու հույսը, նշում են հեղափոխական-դեմոկրատները՝ կոչ անելով ժողովրդին համախմբվել «բարի գործի» համար՝ զինված համաժողովրդական պայքարի[24]: Նրանք առաջադրում էին համայնական սեփականության վրա հիմնված սոցիալ-տնտեսական, պետաիրավական կարգերի ստեղծման գաղափարը:

1861-64 թթ. Պետերբուրգում ստեղծվում և գործում է «Земля и воля» հեղափոխական կազմակերպությունը Ն.Ա. և Ա.Ա. Սերնո-Սոլովյեվիչ եղբայրների և ուրիշների գլխավորությամբ: Կազմակերպության գործունեության ոգեշնչողը Չերնիշևսկին էր (1862թ. հուլիսին Սերնո-Սոլովյեվիչ եղբայրները և Չերնիշևսկին կալանավորվեցին):

---

[23] Նույն տեղում, էջ 101:

[24] Տե՛ս նույն տեղում, էջ 101-106, ***Ն.Գ.Չերնիշևսկի,*** Ընտիր երկեր, էջ 584-597: Կարծիք է հայտնվել, որ Օգարյովի նշված կոչ-հոդվածը կազմելուն մասնակցել է նաև Նալբանդյանը, տե՛ս ***Գ.Казарян,*** նշվ. աշխ. էջ 259, նաև՝ ***С.Даронян,*** նշվ. աշխ., էջ 182-186:

Այդ շրջանում կազմված մի շարք թռուցիկներում (պրոկլամացիաներում) առաջադրվում է զինված ապստամբությամբ ինքնակալությունը տապալելու, հողը ժողովրդին տալու համայնավարական-սոցիալիստական կարգեր և հանրապետական կառավարում՝ հանրապետություն ստեղծելու պահանջ: «Կեցցե Ռուսական սոցիալական և դեմոկրատական հանրապետությունը» բառերով է վերջանում «Երիտասարդ Ռուսաստան» թռուցիկը (1862 թ.)[25]: Հեղափոխական-դեմոկրատները գյուղացիությանն էին համարում այն վճռական ուժը, որն ունակ էր կատարելու սոցիալական հեղաշրջում: Այն, որ նրանք դեռևս չէին տեսնում պրոլետարիատի՝ բանվորների վճռական՝ հեգեմոն դերը, դա հասկանալի էր, քանզի Ռուսաստանի բնակչության 9/10-րդ մասը գյուղացիներ էին: Քաղաքային բնակչությունը 1856 թ. կազմում էր 5.684 հ.՝ երկրի բնակչության ընդհանուր թվի 8,9%-ը[26]: Խոշոր կապիտալիստական ձեռնարկություններում բանվորների թիվը 1868թ. կազմում էր 706 հազար, 1890թ.՝ 1.432 հազար[27]:

---

[25] Տե՛ս Хрестоматия…, ст. 110-114.

[26] ***Е.А.Мороховец,*** Крестьянская реформа 1861г., Москва, 1937, с. 21.

[27] Տե՛ս Хрестоматия по истории СССР, т. III, Москва, 1952, ст. 249, Ի դեպ այն, որ այսօր՝ այս ավելի քան 15 տարիներին՝ սկսած 1990 թվականից մինչև այսօր, մեր ժողովուրդը կարծես թե հաշտվել է դեպի ետ՝ վայրենի կապիտալիզմ վերադառնալու, համատարած աղքատության, գույքային աննախադեպ հանցավոր շերտավորման և այլ չարիքների հետ, նաև հետևանք է՝ էական չափով նրան, որ երկրում ավերվել է արդյունաբերությունը ըստ էության չկա բանվոր դասակարգ, իսկ կառավարության կողմից որպես ժողովրդի նկատմամբ «հոգատարության» դրսևորում «բացվող» աշխատատեղերում՝ հրեա,

1865թ. 706 հազար բանվորներից 509 հազարը ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունում աշխատող բանվորներ էին, 165 հ.՝ լեռնարդյունաբերության, 32 հ.՝ երկաթգծային ճանապարհներում աշխատող: 1890թ. 1.432 հազարից 840 հազարը՝ ֆաբրիկա-գործարանային, 340 հազարը՝ լեռնարդյունաբերությունում, 252 հազարը՝ երկաթգծային ճանապարհներում աշխատողներ էին: 1862-65թթ. Ռուսաստանի բնակչությունը կազմել է 76.807.204 մարդ (19-րդ դարի առաջին կեսին՝ 1859թ. սկզբի դրությամբ կազմել է 67.081.167 մարդ - "Хрестоматия…", ր3. 14, 218): 1862-66թթ. 76.807.204 բնակչությունից ընդամենը 8.152.462-ը կամ 10,6%-ն է կազմել քաղաքային բնակչությունը, այսինքն 1856թ. 5.684-ից կամ բնակչության 8,9%-ից այն 62-66թթ. հասել է ընդամենը 8.157.462-ի կամ 10%-ի, իսկ ճորտատիրական իրավունքի վերացումից հետո 1897թ. տվյալներով քաղաքային բնակչությունը կրկնապատկվել է՝ կազմելով 16.785.212 մարդ կամ երկրի այդ ժամանակվա 128.924.289 բնակչության 13%-ը: Ինքնին հասկանալի է, որ 68-74մլն. բնակչություն ունեցող 10%-ից պակաս քաղաքային բնակչություն և առավել ևս աննշան քանակությամբ թվով բանվորներ ունեցող

հայ և այլազգի բուրժուաների սեփականությամբ ոչ միայն աննախադեպ դաժան ձևով շահագործվում են բանվորները, այլև դեռևս վերջիններիս ստիպում են լռել՝ մի կտոր հացը կորցնելու երկյուղից. բայց դա ժամանակավոր երևույթ է և բանվոր դասակարգը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, քանակապես և որակապես աճելով իր խոսքը կասի ժողովրդին պատճառած երեկվա, այսօրվա և վաղվա չարիքների, տառապանքների համար (Մ.Թ.):

երկրում բանվոր դասակարգի հեգեմոն դերը չտեսնելը հեղափոխական-դեմոկրատների կողմից, որոշ առումով, օբյեկտիվորեն արդարացի էր:

Ճորտատիրական իրավունքի վերացումը, անկասկած, զարկ է տալիս կապիտալիստական արտադրության զարգացմանը, բնականաբար բանվորների թվի կտրուկ աճին[28], որը, ինչպես տեսանք, իր արտացոլումն է գտնում նաև վիճակագրության մեջ:

*19-րդ դարի 80-90-ական թվականներին բանվորական, ապա նաև սոցիալիստական՝ կոմունիստական շարժումը աննախադեպ վերելք է ապրում: 70-ական թվականներին աշխուժացած նարոդնիկական շարժումը, որի գաղափարական հայտնի առաջնորդներ էին **Մ.Ա.Բակունինը** (1814-1876), **Պ.Հ.Լավրովը** (1823-1900) **Պ.Ն.Տկաչովը** (1844-1885թթ.) և ուրիշներ, չնայած այդ շարժման գործիչների ժողովրդի ազատագրմանն իրենց անձնազոհ նվիրվածությանը, հաջողության չի հասնում: Փորձելով անմիջապես ժողովրդի՝ գյուղացիության մեջ խռովություն՝ զինված պայքար առաջ բերել ինքնակալության դեմ, արդեն 1874թ. նրանք անմիջապես գնում էին դեպի ժողովուրդ (նրանցից շուրջ 1000 քարոզիչներ կալանավորվում, շատերն աքսորվում, տաժանակիր աշխատանքի ուղարկվում և այլ պատիժների դատապարտվում): Նարոդնիկները*

---

[28] 19-րդ դարի վերջին այն հասնում է 10 միլիոնի, իսկ 1913թ. 17,8 միլիոնի՝ 159,2 մլն. ընդհանուր բնակչությունից և 28,5 մլն. (1914թ.), Տե՛ս История КПСС, Москва, 1976, ст. 10. История СССР XIX начало XX, ст. 263.

նաև ստեղծում են իրենց կազմակերպությունները. «Հյուսիսային հեղափոխական նարոդնիկական խումբը»՝ 1876թ., «Զեմլյա ի վոլյա»՝ 1878թ., 1879թ.՝ «Նորոդնայա վոլյա», ևն: 1881թ. մարտի 1-ին նարոդովոլցիները սպանում են Ալեքսանդր II-ին: Սակայն «խռովարարական» և «անհատական» տեռորի մեթոդները հաջողություն չեն բերում, ***քանզի անհրաժեշտ էր տապալել, ոչնչացնել ամբողջ համակարգն՝ իր սոցիալ-տնտեսական, պետահրավական կարգերով****, իսկ դրա համար անհրաժեշտ էր հետևողական կազմակերպված, համաժողովրդական պայքար: Այդպիսի գործը հետագայում իրենց վրա վերցրին բանվորական, մարքսիստական կազմակերպությունները: Բանվորական, մարքսիստական կազմակերպությունների ստեղծումը կատարվում է Եվրոպայում տեղի ունեցող շարժումների ազդեցությամբ՝ մարքսիստական աշխարհայեցողության ակնհայտ ազդեցությամբ: 19-րդ դարն ընդհանուր առմամբ կապիտալիզմի հաստատման ժամանակաշրջան էր, սակայն, ֆեոդալիզմից առաջադիմական լինելով հանդերձ՝ այն իր էությամբ մնում էր որպես շահագործողական հասարակարգ, և որպես այդպիսին հենց իր հաստատման շրջանում առաջին ճեղքվածքներն է տալիս: «Ապրել աշխատելով կամ մեռնել մարտնչելով» կոչով ու կարմիր դրոշով սկսված Լիոնի ջուլհակների 1831թ. նոյեմբերյան և 1834թ. ապրիլյան ապստամբությունները, 1836-48թթ. չարտիստական-բանվորական շարժումներն Անգլիայում (չարտիստները 1840թ.*

*ստեղծեցին առաջին պրոլետարական կազմակերպությունը՝ Ազգային չարտիստական ասոցիացիան), 1848թ. ֆրանսիական՝ փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությանը հաջորդած՝ Փարիզում սկսված բանվորական զինված ապստամբությունը՝ նույն թվականի հունիսին, որի մասին ի դեպ որպես ականատես պատմում է Ա.Ի.-Գերցենը[29], 1871թ. մարտի 18-ի պրոլետարական հեղափոխությունը Փարիզում, որն առաջին անգամ տապալեց բուրժուազիայի իշխանությունը և առաջին անգամ ստեղծեց բանվորական, ժողովրդական պետություն՝ գոյատևելով ընդամենը 72 օր, կապիտալիստական, բուրժուադեմոկրատական կարգերի դեմ ուղղված քայլեր էին: Դրանք կապիտալիզմի առաջին ճեղքվածքներն էին, որոնք, ի դեպ, ոչ միայն մինչ այսօր բաց են մնացել, այլև ավելի խորացել, միայն անհրաժեշտ է մի հայացք ձգել անցյալին՝ հասկանալու այսօրը և մտածելու վաղվա մասին: Այս իրողությունները և արդեն 19-րդ դարում սկսված կապիտալիստական գերարտադրության ճգնաժամերը, կապիտալիզմին, «շուկայական էկոնոմիկային» հատուկ արտադրության **հանրային** և յուրացման **մասնավոր** բնույթի միջև եղած հակասության (ամբողջ հասարակությունը աշխատում է, մի քանի հոգի յուրացնում, հարստանում են) հետևանքով լուրջ նախադրյալներ հանդիսացան նաև պատմության մարքսիստական-մատե-*

[29] Տե՛ս ***Ա. Ի. Գերցեն***, Եղելություններ և խոհեր, Երեք գրքով, Գիրք «Բ», Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 19-26:

*ռիալիստական ըմբռնման ծագման[30], այդ գաղափարախոսության տարածման ու գերիշխանության համար: 1847թ. Լոնդոնում **Կարլ Մարքսի** (1818-1883) և **Ֆրիդրիխ Էնգելսի** (1820-1895) ակտիվ մասնակցությամբ ստեղծվում է «Կոմունիստների միությունը» առաջին կոմունիստական կազմակերպությունը՝ կուսակցությունը: Մարքսի և Էնգելսի կողմից ստեղծվում է միության ծրագիրը (1848թ. հունվար)՝ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»: Միությունն իր նպատակը հայտարարում էր շահագործողական-բուրժուական կարգերի տապալումը, մասնավոր սեփականության վերացումը, պրոլետարիատի տիրապետության հաստատումը, շահագործումից ազատ հասարակության ստեղծումը[31]: «Մանիֆեստ...»-ը, որն ի դեպ առաջին անգամ ռուսերեն տպագրվել է 1869թ. «Կոլոկոլ»-ի ժնև տեղափոխված տպարանում Բակունինի թարգմանությամբ, պարզ ու հստակ լեզվով ներկայացնում է հասարակական զարգացման, հա-*

---

[30] Տե՛ս օր. ***Կ.Մարքս***, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը. ***Կ.Մարքս*** և ***Ֆ.Էնգելս,*** Ընտիր երկեր, հ. I, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 689, *Ֆ.Էնգելս,* Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Ընտիր երկեր, հ. 3, «Հայաստան» հրատ., Ե., 1978թ., էջ 245, 644-645 նն: Տե՛ս նաև ***Վ.Ի.Լենին,*** Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ, Հայկուսհրատ, Երևան, 1935, էջ 5-15, ***Մ.Ե.Ֆրանգուլյան,*** Կ.Մարքսի փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական հայացքների ձևավորման պատմությունից, Երևան, 1983, История политических и правовых учении, под. ред. док. юрид. наук проф. ***О.Э. Лейста***, изд. “Зерцало”, Москва, 1999, ст. 504-514 и др.

[31] Տե՛ս Новая история. Первый период. Издательство “Высшая школа”, Москва, 1983, ст. 194-196.

սարակության, նրա պատմության ճանաչման մարքսիստական ընկալումը, բոլոր ֆորմացիաների գնահատությունն ու կոմունիստական, բանվորական շարժման նպատակները: Մինչ այժմ գոյություն ունեցող հասարակարգերի պատմությունը դասակարգային պայքարի պատմություն է՝ հարուստի ու աղքատի, շահագործողի ու շահագործվողի, ճնշողի ու ճնշվողի, ազատի ու ստրուկի, ճորտի ու ֆեոդալի միջև պայքարի պատմություն: Այդպես է բնութագրվում նաև բուրժուական հասարակարգերի պատմությունը, հասարակարգ, որն առաջադիմական լինելով նախորդ հասարակարգերից, ստեղծելով հսկայական արտադրողական ուժեր, ձևականորեն՝ իրավաբանորեն օրենքով ազատ համարելով մարդուն՝ իրականում ավելի դաժան ու «քաղաքակիրթ» ձևերով է շահագործում նրան, քանզի իր ձեռքում է կենտրոնացրել հասարակության արտադրողական ուժերը՝ մարդկային ամեն արժեք վերածելով դրամական արժեքի, փողի. «Բուրժուազիան ամենուրեք, որտեղ նա տիրապետության հասավ, խորտակեց բոլոր ֆեոդալական, նահապետական, իդիլիական հարաբերությունները: Նա անողոքաբար կտրատեց այն խայտաբղետ ֆեոդալական կապանքները, որոնք ամրացնում էին մարդուն նրա «բնական տերերին», և մարդկանց միջև ոչ մի այլ կապ չթողեց, բացի մերկ շահից, անսիրտ «կանխիկ հաշվից»: Եսամոլ հաշվի սառցաջրի մեջ նա խեղդեց կրոնական էքստազի, ասպետական խանդավառության, քաղքենիական սենտիմենտա-

*լության սրբազան սարսուռը: Նա մարդու անձնական արժանապատվությունը վերածեց փոխանակային արժեքի և շնորհված ու սեփական վաստակով ձեռք բերված անթիվ ազատությունների տեղը դրեց **միայն** առևտրի անխիղճ ազատությունը: **Մի խոսքով՝ կրոնական ու քաղաքական պատրանքներով քողարկված շահագործումը նա փոխարինեց բացահայտ, լկտի, ուղղակի, անգութ շահագործումով** /Ընդգծումը մերն է - Մ. Թ./: **Բուրժուազիան** սրբության լուսապսակից զրկեց բոլոր այն տեսակ գործունեությունները, որոնք մինչև այդ պատվավոր էին համարվում և որոնց վրա նայում էին ակնածությամբ լի սարսուռով: Նա բժշկին, իրավաբանին, քահանային, բանաստեղծին, գիտության մարդուն իր վճարովի վարձկան գործավորները դարձրեց: Բուրժուազիան պատռեց սրտաշարժ-սենտիմենտալ քողը ընտանեկան հարաբերություններից և դրանք վերածեց **զուտ դրամական** /ընդգծումը մերն է- Մ. Թ./ հարաբերությունների»*[32]*:*

Մանրամասն, ըստ հնարավորին՝ ծրագրի սահմաններում ներկայացնելով բուրժուական հասարակության բոլոր թե՛ «դրական» և թե՛ բացասական կողմերը՝ Կ.Մարքսը և Ֆ.Էնգելսը անխուսափելի էին համարում բուրժուական հասարակարգի կործանումը՝ նրա իսկ ծնած գերեզմանափորի՝ պրոլետարիատի, բանվոր դասակարգի գլխավորությամբ:

---

[32] ***Կ.Մարքս*** և ***Ֆ.Էնգելս,*** Ընտիր երկեր, Հ. I, Երևան, 1972թ., էջ 141-142 («Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»):

1864թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում հիմնադրվում է առաջին ինտերնացիոնալը՝ 1852թ. լուծարված Կոմունիստների միության փոխարեն: Այն միջազգային բանվորական կազմակերպություն էր, որի նպատակը միջազգային բանվորական շարժման միավորումն էր բուրժուա-շահագործողական կարգերի վերացման համար պայքարում: Ինտերնացիոնալի մեջ հետագա տարիներին ընդունվում են տասնյակ հազարավոր անդամներ աշխարհի տարբեր երկրներից[33]: Ինտերնացիոնալում ստեղծվում է նաև ռուսական սեկցիա: Մարքսիստական գաղափարներն արագորեն մուտք են գործում նաև Ռուսաստան: 1875թ. Օդեսայում ստեղծվում է առաջին բանվորական կազմակերպությունը Ն.Օ.Զասլավսկու գլխավորությամբ՝ «Հարավռուսական բանվորական միությունը», որի նպատակն էր պայքարը կապիտալիստական շահագործումից ազատվելու համար: 1878թ. Պետերբուրգում ստեղծվում է «Ռուսական բանվորների հյուսիսային միությունը» Վ.Պ.Օբնորսկու, Ս.Ն.Խալտուրինի և ուրիշների գլխավորությամբ: 1883թ. Ժնևում նշանավոր ռուս մարքսիստ Գ.Վ.Պլեխանովի (որը «Զեմլյա ի վոլյայի» ղեկավարներից էր) գլխավորությամբ ստեղծվում է «Աշխատանքի ազատագրության խումբը»՝ առաջին ռուսական մարքսիստական կազմակերպությունը: Խումբը մեծ աշխատանք է տանում Ռուսաստանում մարքսիզմի տարածման ուղղությամբ: 1890-ական թվականների և հետագա-

[33] Տե՛ս “Новая история …” էջ 360-361:

*յի մարքսիստական, բանվորական և կոմունիստական շարժումները, որոնց վերջնական նպատակը պրոլետարական հեղափոխության միջոցով ցարական կարգերի տապալումն ու սոցիալիստական կարգերի ստեղծումն էր կապված էր **Վ.Ի.Լենինի** (1870-1924) ու 1898թ. ստեղծված ՌՍԴԲԿ-ի (կոմկուս) գործունեության հետ, որն էլ ավարտվեց 1917թ. հոկտեմբերին ինչպես ցարական ինքնակալության, այնպես էլ դեռևս նոր-նոր զարգացող բուրժուական կարգերի տապալմամբ ու սոցիալիստական կարգերի ստեղծմամբ: Ռուսաստանում և Անդրկովկասում Վ.Ի.Լենինի գլխավորած հեղափոխական շարժման հետ է կապված հայ հեղափոխական-դեմոկրատների՝ **Ստեփան Շահումյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի** և ուրիշների գործունեությունը, գործիչներ, որոնցից շատերն ընդհանուր հեղափոխական աշխարհայացքի ու գործունեության հետ միասին նաև խորապես ազգային, հայ ժողովրդի ճակատագրով, նրա ազգային պատմական խնդիրներով մտահոգված գործիչներ էին[34]:*

Նալբանդյանի և մեր մյուս հեղափոխական-դեմոկրատների, լուսավորիչների գործունեության շրջանում նկատելիորեն ակտիվանում է նաև մշակութային կյանքը, որի աշխուժացման հիմքերը դրվել, սկզբնավորվել էին դեռևս XVIII դարում: 18-րդ դարում հրատարակված հայկական մեկ-երկու պարբերականներից («Ազդարար» - Մադրաս -

---

[34] Տե՛ս օր. ***Լենդրուշ Խուրշուդյան,*** Հայոց ազգային գաղափարախոսությունը, Երևան, 1999, էջ 252-258:

1794 –96, «Տարեգրություն» - Վենետիկ, 1799) հետո միայն 19-րդ դարի առաջին կեսին հրատարակվում էին շուրջ 40 անուն հայկական թերթեր ու ամսագրեր Հայաստանից դուրս՝ սփյուռքում[35]: 1512-1800թթ. շուրջ 200 տարվա ընթացքում լույս տեսած մոտ 1000 հնատիպ գրքերի փոխարեն միայն 19-րդ դարի առաջին կեսին լույս են տեսնում 1720 անուն գրքեր, որոնցից 320-ը աշխարհաբար, ևն:

19-րդ դարի երկրորդ կեսին 40-ի փոխարեն արդեն հրատարակվում էր 340 անուն թերթ և ամսագիր՝ բուն Հայաստանում և արտերկրում[36]: Բացվում են մի շարք դպրոցներ. 1810 թվականին Աստրախանում՝ Աղաբաբյան դպրոցը, 1815թ. Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, 1824թ. Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, 1832թ. Երևանում՝ գավառական դպրոցը, 1837թ.՝ Երևանի, 1838թ.՝ Շուշիի թեմական դպրոցները, 1836թ.՝ Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը: Հայկական դպրոցներ են բացվում Վենետիկում, Կալկաթայում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում (Իզմիր), Վանում, Էրզրումում (Կարին), Փարիզում: Հայկական առանձին շրջաններում ստեղծվում են էին նաև ծխական դպրոցներ[37]: 19-րդ դարի երկրորդ կեսին բացվում են նոր դպրոցներ 1874թ.՝ Էջմիածնի Գևորգյան ճե-

---

[35] Տե՛ս ***Վ.Ա.Պարսամյան, Շ.Ռ.Հարությունյան,*** Հայ ժողովրդի պատմություն, Երևան, «Լույս» հրատ., 1979, էջ 125-126, ***Ռ.Ա.Իշխանյան,*** Հայ գիրքը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, էջ 107-108 և այլն:

[36] Տե՛ս ***Վ.Ա.Պարսամյան, Շ.Ռ. Հարությունյան***, Հայ ժողովրդի պատմություն, էջ 281-282:

[37] Տե՛ս նույն տեղում, էջ 126-127:

մարանը, 1876թ.՝ Կ.Պոլսի Կենտրոնական վարժարանը, 1878թ.՝ Վանի Երեմյան վարժարանը, 1881թ.՝ Երևանի ուսուցչական սեմինարիան, 1881թ.՝ Երևանի Գիմնազիան, 1881թ.՝ Նոր Նախիջևանի Թեմական դպրոցը, 1881թ.՝ Էրզրումի Սանասարյան դպրոցը ևն: 1850-ական թվականներից սկսած բացվում են և իգական դպրոցներ. Երևանի Հռիփսիմյան՝ 1850 և Գայանյան՝ 1866, Շուշիի Մարիամյան՝ 1864թ., Թիֆլիսի Գայանյան՝ 1869 և Մարիամյան-Հովնանյան՝ 1877թ., Ախալցխայի Եղիսաբեթյան՝ 1870թ., Ալեքսանդրապոլի Արղության՝ 1871թ., Բաքվի Հռիփսիմյան 1874թ., Կարսի Մարիամյան՝ 1890թ. ևն[38]:

1873 թվականին Ռուսաստանի 6 հայկական թեմերում՝ Երևանի, Ղարաբաղի, Թիֆլիսի, Շամախու, Աստրախանի և Նոր Նախիջևանի-Բեսարաբիայի, կային 242 դպրոցներ, որոնցից արական՝ 201, իգական՝ 36, երկսեռ՝ 5: Աշակերտների թիվը կազմում էր 9482, որից տղաներ՝ 7,722, աղջիկներ՝ 1760: 1881թ. նշված 6 թեմերում և Կարսի մարզում կար 330 դպրոց, որից արական՝ 247, իգական՝ 83: Աշակերտների թիվը կազմում էր 16.877, որից տղաներ՝ 12.555, աղջիկներ՝ 4322: Ուսուցիչների թիվը 1881թ. համեմատությամբ կրկնապատկվել էր՝ 416-ից հասել 832-ի: 1880 թվականին Կովկասի ուսումնական շրջանի 830 պետական և մասնավոր դպրոցներում սովորում

[38] Տե՛ս նույն տեղում, էջ 283:

էին 8092 հայ աշակերտ, իսկ 1900թ.՝ 1.901 դպրոցներում՝ 31.108 աշակերտ[39]:

19-րդ դարում հրապարակ են իջնում հայ անվանի գրողներ, բանաստեղծներ. ***Հարություն Ալամդարյանը*** *(1796-1834),* ***Մեսրոպ Թաղիադյանը*** *(1803-1858), հայ մեծ լուսավորիչ գրող* ***Խաչատուր Աբովյանը*** *(1809-1848),* ***Սմբատ Շահազիզը*** *(1841-1907),* ***Մկրտիչ Պեշիկթաշլյանը*** *(1828-1868),* ***Պետրոս Դուրյանը*** *(1852-1872),* ***Ռաֆայել Պատկանյանը*** *(1830-1892),* ***Ռաֆֆին՝ Հակոբ Մելիք-Հակոբյանը*** *(1835-1888),* ***Ծերենցը*** *(1822-1888),* ***Մուրացանը*** *(1854-1908),* ***Շիրվանզադեն՝ Ալեքսանդր Մովսիսյանը*** *(1858-1935),* ***Նար-Դոսը՝ Միքայել Հովհաննիսյանը*** *(1868-1933),* ***Հակոբ Պարոնյանը*** *(1843-1891),* ***Գաբրիել Սունդուկյանը*** *(1825-1912) և ուրիշներ: Հայ գրողներն ու բանաստեղծներն իրենց հայրենասիրական արձակ և չափածո գործերով տարածում էին ազատասիրական-հայրենասիրական գաղափարներ, խանդավառում հայ ժողովրդին՝ պայքարելու հայրենիքի ազատագրման համար: Մուրացանի «Գևորգ Մարզպետունի», Ռաֆֆու «Դավիթ Բեկ», «Սամվել» և այլ ստեղծագործություններ, արտացոլելով հայ ազատագրական պայքարի հերոսական դրվագները, դրանով իսկ բնականաբար, նպատակ էին դնում հիշեցնելու մեր ժողովրդին նրա հերոսական անցյալի մասին՝ պայքարի հանելու նրան օտարի լծից ազատագրվելու համար: Շիրվանզադեի երկերում՝ «Քաոս» ևն, վառ ձևով*

[39] Տե՛ս նույն տեղում:

*տրված է բուրժուական իրականության, բուրժուական ընտանիքի կերպարը իր արատավոր գծերով: **Խաչատուր Աբովյանը**՝ հայ նոր գրականության և աշխարհաբար լեզվի սկզբնավորողը, առաջադրում էր ժողովրդի, ազգի լեզվապահպանման խնդիրը: Օրհնելով ռուսական կայսրությանը հայ ժողովրդի արևելյան հատվածը պարսկական բռնակալական լծից ազատելու համար՝ միաժամանակ կարծես թե հեռատեսությամբ «Վերք Հայաստանի» վեպում (1841թ.) նախազգուշացում – կոչով պահանջում է սրբորեն պահպանել լեզուն. «Ա՜խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մեկ ազգի պահողը, իրար միացնողը **լեզուն ա ու հավատը**: Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՜ր ազգիցն ես»[40]: Վերլուծելով հայոց ազգի գլխին եկած փորձությունները՝ դրանց (բնականաբար նաև հայկական պետականության անկման) պատճառներից մեկն էլ համարում է գրաբար լեզվով ժողովրդի կարդալ ու հասկանալ չկարողանալը[41], այսինքն՝ առաջադրում է աշխարհաբար լեզվի անհրաժեշտությունը ուսման, ամբողջ ազգի լուսավորության անհրաժեշտությունը: Աբովյանը քննադատում է բռնությանը հեզությամբ պատասխանելու՝ հանդուրժելու քարոզը, առաջադրում բռնությանը դիմակայելու անօտարելի իրավունքն՝ անհատի և ժողովրդի համար. «Թո՛ղ ժամ, պատարագն էլ ըլին, ո՞վ ասում՝ չըլի <ն>, լեզուն քրքրվի՛ա-*

---

[40] ***Խաչատուր Աբովյան,*** Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1984, էջ 81:

[41] Նույն տեղում, էջ 421:

սողի, ամա թրի ու թվանքի փիրն օրհնած ա, թեկուզ բողազս էլ դուս կտրեն, ես դրուստն եմ ասում: Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում. աշխարքն էսպես ա, ի՞նչ կարաս անիլ: Տո՛ւր էն աջը, որ բռնի էն խաչը: Աղոթքն իր տեղը, թուրն՝ իրը: Աստված ղշին, հայվանին էլ յա՛ չանգ ա տվել, յա՛ պոզ, յա՛ ատամ, որ չանգռի, հարու տա, կծի, իր գլուխը պահի»[42]*:*

Աբովյանի քաղաքական կողմնորոշումը ռուսական է, նա, ինչպես և ժամանակի ուրիշ շատ առաջադեմ գործիչներ բարձր են գնահատում հայ ժողովրդի պատմական բախտի համար ճակատագրական, փրկարար նշանակություն ունեցող Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից ու միացումը Ռուսաստանին: Ուստի պատահական չէր նաև այդ հարցում Աբովյանի ոգևորությունը. «Օրհնվի՛ էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց»[43]*: Սրանք կեղծավոր խոսքեր չէին, այլ իրողությունների սթափ գնահատական, քանզի Աբովյանը նկա-*

---

[42] Նույն տեղում, էջ 103:
[43] Նույն տեղում, էջ 74:

րագրում էր այն տառապանքները, զրկանքները, որ կրել էր հայ ժողովուրդը պարսկա-ղզլբաշական լծի տակ, որից էլ նա ազատվեց ռուսական զենքի շնորհիվ 1827 թվականին: Նկարագրելով պարսկական տիրապետության տակ գտնվող հայերի վիճակը՝ Աբովյանը դառը հիշողությամբ գրում էր. «Մարդ ո՞ր հողը տա գլխին. ինչ ուզում են, է՛ն են անում: Դատաստան չկա՛, իրավունք չկա՛, ու հայ ազգն էլ էնքան էսպես ցավեր տեսել էր, մեկ օր խոսքըմին չէ՛ր ըլում, որ իր գլուխն ազատի: Աղջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում: Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը: Զարմանալուն էս ա, որ էսպես կրակի, զուլումի մեջը էլի նրանց աչքը ուրախություն, նրանց երեսը ծիծաղ էր գալիս»[44]*: Ընդհանրապես ժամանակի բոլոր առաջավոր հայ մտավորականների, բանաստեղծների, գրողների երկրում ակնհայտորեն գերակշռում է մտահոգությունը հայրենիքի բախտի նկատմամբ, ազատագրական պայքարի խրախուսումը ևն: Իր «Մահ քաջորդույն» բանաստեղծության մեջ* ***Մկրտիչ Պեշիկթաշլյանը*** *Զեյթունի 1862թ. հերոսամարտի օրինակով խանդավառում էր հայ մայրերին ու որդիներին. արդարացնում հայրենիքի ազատագրման՝ համար կյանքը չխնայելու սուրբ գաղափարը.*

«Դու զո՞վ խնդրես, մա՛յր

---

[44] Նույն տեղում, էջ 50:

իմ անոյշ.
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցի՛ր հոս,
Անլաց աչօք դիտէ՛ զորդիդ
Ու իւր վէրքերն արիւնահոս:
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն:
Կարմիր կայլակը ցայտին վէրքէս,
Սակայն մայր իմ, նայէ՛ չորս դին.
Զարիւնըռուշտ Թուրքերըն տե՛ս,
Հազարերով փըռուած գետին.
Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթուն»[45]*:*

Մեկ այլ տեղում («Խոսեցյալ ի կաճառս ընկերության համազգյաց») նա գրում է. «Հայրենիք. ո՞ր ազգասեր սիրտը չի թնդար այս գեղեցիկ ու վսեմ անունս լսելով. հա՛յրենիք, չիկա ասկե ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը. Հայրենյաց սերը սաստիկ բոց մըն է, որ կը բորբոքի ազգասիրին սրտին մեջը, որով կը մաշի անիկա, չի՛ կրնար հանդարտիլ, պատեհավոր առիթ մը կ՚սպասե ան

---

[45] ***Մկրտիչ Պեշիկթաշլյան,*** Երկերի լիակատար ժողովածու, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, էջ 44:

սրտին մեջի վառած բոցը դուրս թափելու, ու աս կրակը չի մարիր, բայց միայն մահվամբ»[46]: Բանաստեղծը ճշմարիտ ազգասեր համարում է նրան, ով. «…Հայրենիքին պաշտպանությանը ու անոր փառքը ու պարծանքը պահելու համար իր կյանքն ալ բանի տեղ չի դներ, որով և հոժարությամբ զոհ կ՚ելլա անոր»[47]: ***Սմբատ Շահազիզն*** *իր «Ազգային վիճակ» բանաստեղծության մեջ քննադատում է, ինչպես Նալբանդյանը, սուտ ազգասերներին, որոնց իրական նպատակը շահամոլությունն ու անձնապաշտական՝ եսամոլական հակումներն են. չի երկնչում դառը խոսքեր ասելու իր հարազատ հայ ազգի հասցեին, որ նա իր լավն ու վատը չի ջոկում: Բանաստեղծի մտքերը խորապես արդիական են նաև, ուստի բերենք մի հատված.*

«Ա՛խ եթե, հայ ազգը, մի օր կամ մի ժամ,
Աստված պարգևեր քեզ միտք խելացի-
Դու կտեսնեիր, որքա՛ն անզգամ
Մարդիկ կան քո մեջ, անկյա՛նք, անհոգի.
Դու կտեսնեիր, որ քո չորս կողմում
Օձեր են բնակվում, դահի՛ճք կորստյան,
Որ անխիղճ որդիքդ արյունդ են ծծում,
Մահ քեզ խնդրելով, անբա՛ղդ

[46] Նույն տեղում, էջ 427:
[47] Նույն տեղում, էջ 428:

Հայաստան:
Նյութապաշտությունն մահու
կապանքով
Խեղդել է դոցա ծանըր լծի տակ.
Ձեռներն ու ոտներ պինդ կաշկանդե-
լով,
Վարում է անգյուտ կորստի հատակ:
Ոսկի ու արծաթ, արծաթ ու ոսկի -
Սհա՛ մտածմունք քո ընտրյալների.
Սոքա են նոցա էության կենտրոն,
Կյանքի նպատակ, Աստված ու
Կրոն»[48]*:*

Բանաստեղծը նզովում է բոլոր նրանց՝ սուտ ազգասերներին, որոնք դարերով հայ ժողովրդին պահել են խավարի ու տգիտության մեջ. կոչ է անում լուսավորության, կրթության ու գիտության տարածման, արմատավորման: Բանաստեղծությունն ամբողջությամբ վերցրած, մեր կարծիքով, անհատ, լուսավոր ու հայրենասեր մարդու հուսահատ բողոքն է թե՛ ազգի «հայրենասեր» ուժերի, սուտ ազգասերների, թե՛ անտարբեր, իր լավն ու վատը չհասկացող ազգի դեմ… Դա բողոք էր այն իրականության դեմ, արտացոլումն այն իրականության, որում ապրում ու գործում էր բանաստեղծը:

Օտարի լծից երկիրն ազատագրելու խնդիրը որպես կանոն, ժամանակի մեր ականավոր բանաստեղծների մշտական մտահոգության առարկան էր,

---

[48] ***Մմբատ Շահազիզ, Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Ծատուրյան, Վահան Միրաքյան,*** Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980, էջ 17-18:

*նրանք արդեն ամենայն որոշակիությամբ ընկալում էին, որ անցել է աղերսելու ժամանակը, պահն է արդեն զենքի դիմելու: **Ռաֆայել Պատկանյանն** իր «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծության մեջ գրում է.*

«-Բա՛վ է, գութան, մեր տանջանքը, համբերությունն վերջ ունի

Դուն տեսա՞ր, որ մեր դուշմանը ամոթ, խելք ու գութ չունի:

Արի՛ փըշրեմ ես քո խոփը, տանք դարբինին կռելու,

Կըռենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դեմ կռվելու:

Եղբայրք հայեր, առե՛ք խոփը, տվեք դարբինին կռելու,

Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փըրկելու»[49]:

*Իր «Բողոք առ Եվրոպա» և «Վեհաժողով» բանաստեղծությունների մեջ Պատկանյանը դառնությամբ կշտամբում է Եվրոպային հայերի հույսերը չարդարացնելու, հայ ժողովրդին հուսախաբ անելու (Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցով. քննադատում Բեռլինի կոնգրեսի (1878թ.) «կույր ու խուլ», «անգութ» մոտեցումը հայկական հարցի նկատմամբ) համար[50]: Արևմտահայ գրող **Հակոբ Պարոնյանը** դևերի փաստաբան է անվանում կղերա-ամիրայական, հետադիմական հասա-*

---

[49] ***Ռաֆայել Պատկանյան,*** Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 146:

[50] Տե՛ս նույն տեղում, էջ 147-148, 154:

րական- քաղաքական հոսանքի ներկայացուցիչ Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանին, որը հանդես էր գալիս ժամանակակից առաջադիմական հոսանքների դեմ[51]*. Տերոյենց – Չամուռճյանը. «1851թ.-ին սկսավ Երևակ անունով տխուր հանդես մը հրատարակել: Օր չէր անցներ, որ հավն երեք անգամ չխոսեր հոն: Դևերու գոյությունը ուրացողները հերետիկոս կը հռչակվեին, և ինքը ամեն ճիգ կը թափեր դևերու գոյությունն հաստատել յուր գոյությամբը, և, որ զարմանալին է դատը միշտ կը վաստկեր»*[52]*: «Ամիրաները կաշառում էին Տերոյենց-Պատվելիին՝ դարձնելով նրան իրենց խոսափողը»,- գրում է Պարոնյանը:* ***Մատթեոս Մամուրյանը*** *(1830-1901) ոչ միայն իր* ***«Սև լեռին մարդը»*** *վեպում՝ գրական-գեղարվեստական միջոցներով, այլև ուղղակի իր հրապարակախոսությամբ ապստամբության՝ զինված պայքարի կոչ է անում «առաջադիմական» բուրժուական հարաբերությունների, այն հարաբերությունների դեմ, որոնք Գերցենը որակում է որպես* ***մարդակերություն.*** *«Կդիտեի, որ Եվրոպայի քաղաքակրթություն կոչվածն, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կվայելեն, իսկ մյուսները թշվառ ստրուկներ են, որ ոչ միայն կրթությամբ, այլև* ***ապստամբությամբ*** *պիտի վերածնին և իրենց շղթաները քակելու պի-*

---

[51] Տե՛ս ***Հակոբ Պարոնյան***, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1968, էջ 46:

[52] Նույն տեղում, էջ 49:

տի հաջողին»[53]*: Խոսքը ոչ թե կամ ոչ միայն ֆեոդալական, այլ նաև բուրժուական Եվրոպայի մասին է, որի շահագործողական անբնական էությունը Մամուրյանը ոչ միայն արդեն հասկացել էր, այլև արդեն ժամանակն էր համարում իր սաղմնավորման, հաստատման փուլում խեղդել, ոչնչացնել չարիքը… Մարքսիստ-լենինյան չլինելով հանդերձ՝ Մամուրյանը խորաթափանցորեն կռահում էր, որ* ***օրենքները ոչինչ*** *են եթե դրանք չեն լուծում մարդկանց գոյատևության, նյութական կյանքի բավարար պայմանների ապահովման հարցը*[54]*: Դա* ***պետության պարտքն*** *է, հենց դրա համար է այն ստեղծված. այսպիսին է Մամուրյանի մոտեցումը*[55]*:* ***Հարություն Սվաճյանը*** *(1831-1874) իր ապրած ժամանակաշրջանի բնութագրմամբ կարծես թե արդի իրողությունների գնահատական էր տալիս գրելով. «Տեսավ* ***Մեղուն*** *(Սվաճյանի խմբագրած՝ 1856-72թթ. հանդես-Մ.Թ.) խոր տգիտության և թմրության մեջ թաղված ամենայն ժողովուրդը. տեսավ, որ հայ ազգը կը կազմեն սակավաթիվ հարուստներ ու քանի մը եկեղեցականք և ժողովուրդն անոնց համար ստեղծված էր միմիայն անոնց ծառայելու: Ժողովուրդն իր ամեն իրավունքներեն զրկված: Այսօր գետնեն պարկ մ՚ոսկի գտնելով, կամ չենք վարանիր ըսելու՝ գողությամբ հարստացող հայը վաղիվ*

---

[53] ***Մատթեոս Մամուրյան,*** Երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 136: Տե՛ս նաև ***Ա.Ի.Գերցեն,*** Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. II, էջ 62-63:

[54] Տե՛ս ***Մատթեոս Մամուրյան,*** նշվ. աշխ., էջ 391:

[55] Տե՛ս նույն տեղում:

ազգին մեջ բռնավորը դարձած: Տեսավ ժողովուրդն ենթակա ամեն հարստահարությանց և հարուստն իր ոչ մեկ պարտավորությունը կատարելու հարկադրված»[56]: Թե՛ Մամուրյանը, թե՛ Սվաճյանը անհրաժեշտ էին համարում կրթության, լուսավորության միջոցով արթնացնել ժողովրդի ինքնագիտակցությունը. նրան ոտքի հանել՝ հեղափոխական ճանապարհով վերացնելու ամեն մի՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին ճնշում, շահագործում: Ի դեպ, արևմտահայ հեղափոխական - դեմոկրատ Մատթեոս Մամուրյանն իրազեկ էր միջազգային բանվորական ու կոմունիստական շարժմանը, մարքսիստական ուսմունքին, Փարիզի կոմունային, երկրորդ ինտերնացիոնալի գործունեությանը, Ռուսաստանում տեղի ունեցող սոցիալական շարժումներին ու ապագա սպասվելիք փոթորիկներին և որոշակի քայլեր է կատարում՝ արևմտահայ հասարակությանը ևս դրանց իրազեկ դարձնելու համար[57]:

Ընդհանրապես, թե՛ Մամուրյանը, թե՛ Նալբանդյանն ու Սվաճյանը, և թե՛ ժամանակաշրջանի մեր մյուս առաջադեմ գործիչներն իրազեկ էին Ֆրանսիայում, Իտալիայում, Լեհաստանում, Ռուսաստանում և այլուր տեղի ունեցող հեղափոխական, ազատագրական, բանվորական շարժումնե-

---

[56] ***Հ.Սրվաճյան***, Հրապարակախոսություն, Հայպետհրատ, Երևան, 1960, էջ 132:

[57] Տե՛ս ***Г.М.Казарян***, Армянское общественно - политическое движение в 50-60-х годах XIX века и Россия, Е., 1979, стр. 305-306, Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. V, Երևան, 1974, էջ 447-448, *Արևելյան Մամուլ,* 1872, սեպտեմբեր, էջ 414, *Արևելյան Մամուլ,* 15 Յուլիս, 1898, թիվ 14, էջ 541-542:

*րին և բավական զգայուն ու համակրանքով էին արձագանքում դրանց: Այդ հարցում իրական ժողովրդասիրության հայրենասիրության դիրքերից ժամանակի հայ առաջադեմ մտածողների կողմից ժողովրդի կարիքների նկատմամբ զգայուն մոտեցում ու անձնվիրություն դրսևորելու հարցում առանձնակի խորաթափանցություն պետք չէ համոզվելու. քան միայն **Միքայել Նալբանդյանի** երկերը՝ արձակ ու չափածո, ընթերցելով: Կարելի է չտարակուսել, որ եթե մեր այդ լուսավոր գլուխներն ու ժողովրդի համար անձնազոհ պայքարին տրված գործիչները (Նալբանդյանը և մյուսները) կենդանի լինեին ապա սարսափով կտեսնեին, որ ոչ միայն դեպի իրենց ժամանակները՝ 19-րդ դար, այլև ավելի ետ՝ դեպի «ցանկապատումների» շրջանը «վերադարձած», ավելի ճիշտ իր «ազգասեր» գործիչների շահամոլությամբ ու արկածախնդրությամբ դեպի վայրենի անցյալ ետ շպրտված այսօրվա մեր հասարակարգի իրողությունները, իրականությունը իսկական **խավարամտություն** են հիշեցնում 19-րդ դարերի հայ առաջավոր մտքի, նրա լուսավոր կրողների զգայուն մոտեցումների. փոթորկուն բռնկումների համեմատ: «Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ:*

Բայց այն խեղճ հայը, այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն

ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և, կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը:

Պաշտպանել այն հայի առաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով:

Սհավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը»[58]: Միքայել Նալբանդյանի այս տողերը միայն («Երկու տող» պամֆլետում – 1861թ.) բավական են տեսնելու այն և մեր օրերի մտածողների, գործիչների հայրենասիրության իսկական էությունը…

* * *

Միքայել Նալբանդյանի գաղափարախոսական, բնականաբար իրավաքաղաքական աշխարհայացքը վերացական չէ. ոչ թե «բացարձակ ոգու»

---

[58] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985, էջ 442:

*ազատատենչ գաղափարը, կամ առավել ևս **«աստվածային նախախնամությունն»** է որոշում հասարակական կյանքը, այլ այդ **կյանքի իրական նյութական պայմանները**: Գաղափարական, իրավաքաղաքական երևույթները, բնականաբար նաև **պետությունը, իրավունքն** այդ պայմաններից. սոցիալ-տնտեսական կյանքից ածանցված, դրանցով պայմանավորված երևույթներ են: Այս առումով Նալբանդյանն ընդհուպ մոտենում է պատմության մատերիալիստական ըմբռնմանը: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» (1862թ.) երկում հենց այդ հիմնարար խնդիրն է արծարծում Նալբանդյանը՝ նշելով. «Տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է, կրկնում ենք դարձյալ: Եվ անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ուժ և զորություն դնել նորա մեջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը, կարոտ է օրական հացի, քանի որ նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում»[59]: Ինչպես արդեն նշել ենք, Նալբանդյանի վրա ուղղակի գաղափարական ազդեցություն են ունեցել ռուսական «գյուղացիական սոցիալիզմի» գաղափարախոսների՝ Գերցենի, Չերնիշևսկու, Օգարյովի հայացքներն ու ռուսական իրականությունը, իսկ այդ իրականության առաջադրած հրատապ խնդիրը դա միլիոնավոր ճորտերի՝ այդ ժամանակվա Ռուսաստանի բնակչության 9/10-րդ մասը կազմող գյուղացիության կեսից ավելինի ճորտական, իրավազուրկ և հողազուրկ վիճակն է: Ուստի Նալբանդյանը տնտե-*

---

[59] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, էջ 493:

սական խնդրի մեջ ամենից առաջ տեսնում էր ***հողային*** *հարցի լուծումը. հողի, երկրագործության՝ որպես սոցիալ-տնտեսական կառուցվածքի, մարդկանց գոյատևման հիմնական՝ կապիտալ հիմքի: Հողը պետք է հավասարապես տրվի ժողովրդին անհատույց ու մշտական օգտագործման, ըստ որում, գյուղացուն, բնակչին տրվում է տնամերձ, տնային հողային տնտեսություն և այլն, այդպիսիք գյուղացին կարող է ազատորեն օտարել, սակայն, դրանից զատ երկրագործական, գյուղատնտեսական մթերքների արտադրության՝ թե՛ սեփական կարիքների, և թե՛ դրանից ստացված արդյունքների հանրային վաճառքի, իրացման համար տրվող հողատարածքներն օտարման ենթակա չեն. դրանք հանրային – պետական են, ամբողջ հասարակությանն են, քանզի եթե դրանք թույլատրվեն օտարման, ապա նրանք, ովքեր փող ունեն, դրանք կգնեն, և հասարակությունը, բնակչության մեծամասնությունը դարձյալ կմնա աղքատ. «Եթե հող (հանրային – Մ.Թ.) վաճառելու սկզբունքը թույլ տրվի, այն ժամանակ աղքատության և թշվառության սկզբունքը կընդունվի:*

Կարող է պատահել, որ ոմանք մարդիկ կամ ժառանգաբար, կամ յուրյանց աշխատությամբ, ավելի հարուստ լինելով, իսկ ոմանք մարդիկ կամ յուրյանց ծուլության պատճառով կամ մի դժբախտությամբ, աղքատ լինելով, աղքատը կվաճառե հարուստին յուր հողը, կմնա անհող և կզրկե յուր սերունդը ևս այն հողի վերա իրավունք ունենա-

*լուց»[60]: Անգլիայում օրինակ նշում է Նալբանդյանը, Լոնդոնում «... այն հսկա քաղաք-աշխարհի հողը յոթն ազնվական տան սեփականություն է, որոնց առաջինն է թագավորական տունը: Հասարակ ժողովուրդը յուր երկու ձեռքից ավելի բան չունի. նա բնակվում է ազնվականների հողի վերա և վարձ է վճարում հողի տիրոջ: Հասարակ ժողովուրդը հող չունենալով չէ կարող երկրագործությամբ պարապել. այն միլիոնները, որ բնակվում են Անգլիո մեջ, օրական աշխատող, վարձկան մշակներ են, ծառա և գործավոր: Այդ միլիոնավոր բազմության միջից, այն մարդիկը, որ դրամագլուխ ունին, վարձում են մի որևիցե ազնվական հողը, վարձում են հազարավոր մշակներ և գործում են երկիրը. սոքա են **ֆերմեր** ասացյալքը»[61]: Այդպիսի՝ ֆերմերային, անտեսության մեջ վարձկան - երկրագործ մշակը կախված է ֆերմերից և պատեհ առիթով կարող է դուրս շպրտվել անգործ ու սոված մնալ, նույն կերպ էլ ֆերմերն է կախված ազնվականից ևն: Եթե այդ ազնվականին մենք փոխարինենք սոսկ դրամատեր բուրժուայով, ապա կտեսնենք, որ Նալբանդյանի նախազգուշացումն անտեղի չէ: Թեկուզ Սոլոնյան Աթենքի (մ.թ.ա. 6-րդ դար) օրինակը՝ գրավայսյուները, թեկուզ այսօրվա իրողությունները, երբ գյուղացիների գերակշռող մասը, որը փող չունի վաղը հարկադրված կարող է զրկվել իր հողից:*

---

[60] Նույն տեղում, էջ 466, Տե՛ս նաև ***Ալեքսանդր Մյասնիկյան***, Միքայել Նալբանդյան, Երկեր հինգ հատորով, հ. 1, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 83-84:

[61] Միքայել Նալբանդյան, էջ 463:

Նալբանդյանի այս մոտեցումն իրական էր ու արդիական՝ հիմնված հասարակության զարգացման պատմական փորձի սթափ ու օբյեկտիվ գնահատման վրա. «…եթե մի գեղի մեջ,- գրում է Նալբանդյանը,- 100 տարու միջոցում, հողերը, աղքատից հարուստին վաճառվելով, գեղի հասարակության սեփական նշանակված հողի քանակությունը անցնե քսան մարդու ձեռք, ասել է թե բովանդակ գեղացիք պիտի վարձ վճարեն այն քսանին, հողը մշակելու և գործելու իրավունքը ձեռք բերելու համար, քանզի ինքյանք վաճառած լինելով, հարկ է որ և գնեն: Իսկ եթե 200 տարու միջոցում այդ քսան տերը դառնա երկու կամ մի, այդպիսի դիպվածում դարձյալ նույն թշվառությունը չէ՞, ինչ որ այժմ ունիս Անգլիո մեջ, նույն մոնոպոլեոնը չէ՞ և հետևանքը հողատիրոջ տարապայման հարստություն, իսկ անհող շինականաց տարապայման աղքատություն չէ՞ լինելու»[62]*: Նալբանդյանը առաջարկում է* ***հողի հիմնական զանգվածի հանրային սեփականություն****: Իհարկե մարդը՝ քաղաքացին պետք՝ է սեփականություն ունենա, այդ թվում հողի մասնավոր սեփականություն, բայց չի կարելի անտեսել այն անառարկելի ճշմարտությունը, որ հասարակական կյանքը* ***ընդհանրական շահերի միավորում է. հասարակությունը ընդհանրական շահերի վրա հիմնված օրգանիզմ է, ըստ որում անհատական և ընդհանրական՝ ամբողջ հասարակության շահի զուգորդման՝ ըստ հնարավորին ներդաշնակ զարգացման***

[62] Նույն տեղում, էջ 466-467:

մեջ միայն կարող է գոյատևել ու զարգանալ նաև անհատական շահը: Շահերի միայն այդպիսի զուգորդումը կարող է ըստ հնարավորին կանխել կամ առավելագույնս նվազեցնել սոցիալական կոնֆլիկտները, պայթունները: Նալբանդյանի դատողություններից փորձենք անել շատ պարզ դատողություն-հետևություններ: Այսօր ՀՀ-ում, որտեղ ի տարբերություն նախկին ՀԽՍՀ-ի (ԽՍՀՄ-ի), թույլատրվում է հողի օտարումը, հազարավոր «հող ստացած» գյուղացիներ իրենց հողերը (նաև տները և այլ գույք) վաճառել և գրավ են դրել ՀՀ բոլոր համապատասխան բանկերում (դրա օրինակները չափազանց առատ են) ըստ որում, գործընթացը շարունակվում է նաև զանգվածային արտագաղթի[63] զուգորդմամբ, բնական է, որ ներկա պայմաններում արդեն 54-55% աղքատ բնակչություն ունեցող երկրում վիճակը գնալով ավելի պետք է վատանա. շերտավորումը, շահագործումը ավելի ու ավելի անտանելի կդառնա…

Եթե բուրժուական դեմոկրատները (նաև մեզ մոտ) իրենց իրական՝ նեղ եսամոլական-նյութապաշտական շահերը հաջող կամ անհաջող քողարկված կամ անթաքույց ձևով առաջադրում են մասնավոր սեփականության հաստատման, հողը

---

[63] Տե՛ս օր.՝ ***Малик Телунц,*** Какая конституция нужна народу? «Օրենք և իրականություն», 2002 թիվ 6(44) էջ 34-36, ***Վ.Ե.Խոջաբեկյան,*** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 304-309, 470-475:

գյուղացուն՝ ով օգտագործում է նրան տալու և այլ սկզբունքներ, դա իրականում սոսկ նշանակում է, որ անհատական՝ տվյալ դեպքում մի խմբի կամ խմբերի եսամոլական շահի ու հասարակության ընդհանրական շահի միջև կոնֆլիկտում կամ ուղղակի հարաբերությունում ***հասարակությունը****՝ որպես* ***ամբողջություն*** *կամ* ***մեծամասնություն****, չի կարողանում դեռևս ընկալել իր* ***ընդհանրական շահն*** *ու դիմագրավել առանձին խմբերի, անհատների՝ ամբողջ հասարակության շահերից չբխող նկրտումներին: Արդյունքում՝ աղքատություն, սով, շահագործում մեծամասնության՝ ըստ էության ամբողջ հասարակության համար,* ***շքեղություն, պերճանք*** *հասարակության մի աննշան խավի, խմբի, խմբերի՝ դասակարգերի համար. նաև մշտական կոնֆլիկտներ՝ անխուսափելի սոցիալական պայթյուններ, հեղափոխություններ, ևն:*

Հողի *կարևորության՝ տվյալ դեպքում համայնական սեփականության հարցը Նալբանդյանի մոտ քննարկվում է ամբողջ կապիտալիստական հարաբերությունների քննադատության պրիզմայով: Ամբողջ աշխարհին հայտնի ժողովրդավարական Անգլիան պաշտպանում է գոյություն ունեցող ստրկությունը ԱՄՆ-ի մի շարք նահանգներում (62-65թթ. քաղաքացիական պատերազմը), որովհետև Անգլիան շահագրգռված է ստրկատիրությունը պահպանած նահանգներից տեքստիլագործության հումքի ստացման հարցում: Կապիտալիստական մասնավոր արդյունաբերության ցնցումները հազա-*

բավոր մարդկանց են փողոց նետում, իսկ հանրային սեփականությունը, հանրային արտադրությունը զերծ է դրանից, «…եթե Հարավային Ամերիկայի (ԱՄՆ-ի հարավային նահանգներում – Մ.Թ.) միջից ստրկությունը վերնա և բամբակի, և այլ բուսականների մշակությունը ընկնի, այն ժամանակ ի՞նչ պիտի լինի անգլիական գործարանների և գործավորների վիճակը»[64]*: Չնայած Անգլիան հարուստ է, իր «խոսակցի» հետ վիճաբանելով՝ ասում է Նալբանդյանը, բայց հարուստ է ոչ թե* ***ամբողջ անգլիական ազգը****, այլ նրա մի քանի մեծատուններ: Իսկ «Ազգ ասելով պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և ո՛չ նորա միջից, նորա քրտինքով և նորա արյունով հառաջացած մի քանի մեծատունք»*[65]*: Անգլիան (Մեծ Բրիտանիան) 29.307.199 բնակիչ ունի, բայց հարուստ է ոչ թե այդ 29 միլիոնը այլ ընդամենը մի քանի հարյուրի հասնող անգլիական ազնվականությունն ու բուրժուազիան: Անգլիան հարուստ կլիներ, եթե նրա* ***ամբողջ ժողովրդի****՝ ազգի միլիոններ բաղկացնող անհատների մոտ տեսնեինք որևիցե նյութական կարողության նշմարանք*[66]*:*

Պետությունը, օրենսդրությունը, իրավունքը, քաղաքական ձևերը, հռչակված ձևական-իրավական ազատությունը, հավասարությունն*, ինչպես կարող են ժողովրդավարական ու իրական լինել, եթե դրանք նյութական հիմք չունեն՝ ժողովուրդը հացի կարոտ է: «…ասա՛ խնդրեմ, ազա՞տ եմ ես, մի-*

---

[64] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, 460-461:
[65] Նույն տեղում, էջ 462:
[66] Տե՛ս նույն տեղում:

միայն օրենքով, քաղաքականապես ազատ կոչվելով, ազա՞տ եմ ես, քանի որ նյութական կարոտությունը ստիպում է ինձ, կամա ակամա, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ***ծառայությամբ*** *հաց ճարել իմ ընտանիքի համար»*[67]*: Սրանից բխող մերօրյա ընկալումը ևս շատ պարզ է:* Այս առումով վերցնենք նաև 1995թ. *և հետագա սահմանադրությունները**.* ինչպիսի՜ իրավունքներ, ազատություններ ասես, որ չի «շնորհել» *դրանք* մեր ժողովրդին… *Բայց որոնք են դրանց իրական հիմքերը եթե ամբողջ հասարակության աչքի առջև նախորդ շրջանի (ոչ միայն խորհրդային ավելի քան 70 տարիների) ժողովրդի, հասարակության ամբողջ ունեցվածքն անգլիական ցանկապատումների՝ կապիտալի նախնական կուտակման՝ բարբարոսական կամ «քաղաքակիրթ» ձևերով հափշտակվեց իշխանությունը զավթած մի խումբ անձանց, ուժերի ու նրանց շրջապատի կողմից՝ սեփականազրկելով ամբողջ ժողովրդին: Բոլորին պատկանող ունեցվածքի նման «բաժանումը» անգամ «նոր» բուրժուական հարաբերությունների երկրպագուների զարմանքն ու սարսափն առաջացրեց այն աստիճան, որ «նոր» հարաբերությունները նրանք որակեցին որպես վերադարձ դեպի վայրենի կապիտալիզմ կամ նեոֆեոդալիզմ*[68]*: Ի՞նչ ազատության, արդա-*

---

[67] Նույն տեղում, էջ 470:

[68] Տե՛ս մեր նշված հոդվածը: Տե՛ս նաև ***Վ.Ս.Ներսիսյան,*** Իրավունքի և պետության տեսություն, «Նաիրի» հրատ., Երևան, 2001, էջ 124-125, Общая теория государства и права, т. 1, М., 2000, ст. 107-111, ***Վ.Ե.Խոջաբեկյան,*** Հայաստանի բնակչության վեր-

ության, հավասարության մասին կարող է խոսք լինել, երբ արդեն հիմա (երբ ժողովրդի մեծ մասը դեռևս գոյատևում է խորհրդային տարիներին ձեռք բերածի շնորհիվ) բնակչության կեսից ավելին՝ պաշտոնապես 54-55%-ը, աղքատ կամ ծայրահեղ աղքատ է ճանաչվել[69]*: Միանգամայն իրավացի է այս առումով՝ ՀՀ 90-ական թվականներից սկսած «բարենորոգումների» գնահատման առնչությամբ, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Վ.Խոջաբեկյանը՝ այդ* ***«բարեփոխումները» անվանելով ծանր հանցագործություն՝ եղեռնագործություն՝ ուղղված հայ ժողովրդի, մարդկության դեմ, հայկական պետականության ու անկախության դեմ***[70]*: Նալբանդյանը կարծես թե նոր բան չի ասում: Սակայն պատշաճ գիտականության հետ մեկտեղ նրա խոսքն աչքի է ընկնում օբյեկտիվությամբ, անկեղծությամբ, նա ժողովրդին բացատրում է, որ քաղաքական-պետաիրավական ձևերը, հռչակված բուրժուական ժողովրդավարությունը, ազատություններն ու իրավունքները* ***կեղծ են, անի-***

արտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., Երևան, 2001, էջ 470-473, ***Մ.Մ.Թելունց,*** Սահմանադրական փոփոխությունների նախագիծ. այո՞, թե՞ ոչ, «Հրազդան» հրատարակչություն, Երևան, 2003, էջ 3-27 և ուրիշ:

[69] Տե՛ս նշված աղբյուրները: Տե՛ս նաև Ազգային վիճակագրական ծառայություն: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, «Լուսաբաց», Երևան, 2001, էջ 43-59 և մյուս էջերը, Հայաստանի Հանրապետություն: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, «Անտարես» հրատ., Երևան, 2003, էջ 24-37 և հտ.:

[70] Տե՛ս ***Վ.Խոջաբեկյան,*** նշվ. աշխ., էջ 312, 470-473 և հտ.:

__ական, խաբեություն__ են, քանզի դրանց սոցիալ-__տնտեսական__ հիմքերը, անարդարացի, անբնական ու անբանական են: Իր հակաճառող խոսակցին՝ բուրժուական կարգախոսների ջատագով սեփականատիրոջը (որին բաժին է հասել թալանից...) առարկելով՝ Նալբանդյանն ասում է. «Բռնակալությունը (պետությանը ևն - Մ.Թ.), որ նույնն է թե ավազակություն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփականությունը: Ոչ նա իրավունք ուներ վաճառելու և ոչ դու իրավունք ունեիր գնելու. նա՛ գող է և դու գողակից, որովհետև երկրագունդը անհատի սեփականություն չէ, նորա վերա ապրում են և պիտի ապրին բոլոր նորա որդիքը անխտիր»[71]: Նալբանդյանը ոչ միայն իր համար, այլև ամենից առաջ ժողովրդի համար առանձնացնում է __պետությունը, կառավարությունը ժողովրդից, ազգից__: Այդ առանձնացումը օբյեկտիվ ու անհրաժեշտ է թեկուզ հենց նրա համար, որ ազգը, ժողովուրդը տարբերի իր բարին ու չարը, իմանա իր անելիքը, ազատվի այն հակագիտական մտայնությունից, թե ազգը, ժողովուրդն ու պետությունը միասնական են, միահյուսված են միմյանց և մեկ անքակտելի ամբողջություն են կազմում: Ոչ,- ասում է Նալբանդյանը,- կառավարությունը (պետությունը), ազգ չէ այլ պաշտոնյաների խումբ, ապարատ, իրավաքաղաքական կազմակերպություն ևն, և այն չի կարելի խառնել ազգ, ժողովուրդ հասկացության հետ[72]: Նալբանդ-

---

[71] __Միքայել Նալբանդյան__, Երկեր, էջ 471:

[72] Տե՛ս նույն տեղում, էջ 462, 508, 509: Տե՛ս նաև __М.Налбандян__, Избранные философские и общественно-политические произве-

յանն ակնհայտորեն մերժում է կառավարման բռնակալական՝ բացարձակ միապետական ձևերը և արտահայտում իր համակրանքը ***պառլամենտական (խորհրդարանական)*** *ձևերի նկատմամբ: «Հեգելը և նրա ժամանակը» աշխատության (1863) մեջ Նալբանդյանը համակրանքով է խոսում անգլիական պառլամենտական-սահմանադրական կարգերի մասին՝ հատկապես գերմանական միապետության համեմատությամբ: Ինչպես* ***Հովսեփ Էմինը*** *(1826-1809), XVIII դարի (նաև 19-րդ դարի) մյուս առաջադեմ մտածողները՝* ***Վոլտերը*** *(1694-1778),* ***Մոնտեսքյոն*** *(1689-1755),* ***Հելվեցիուսը*** *(1715-1771) և ուրիշներ, Նալբանդյանը ևս անգլիական պետական կարգերի առաջադիմությունը տեսնում էր Եվրոպայում և ամբողջ աշխարհում դեռևս գոյություն ունեցող միապետական՝ բացարձակ միապետական ձևերի հետ հարաբերակցությամբ՝ համեմատությամբ: «Անգլիան իր կառավարության ստգտանված ձևերով, այսօր առաջինն է Եվրոպիո մեջ ազատության մասին, և անգլիական մարդը իրավամբ կարող է պարծենալ իր ազատությամբ, մինչդեռ ուրիշները և մանավանդ խեղճ ողորմելի գերմանացիք ցեխում խրված, նախանձու տրաքում են և տակավին հավանն էլ չեն Անգլիային: Տո՛, մի նորա չափ ազատություն ձեռք բեր, հետո խոսիր է.*

дения. Госиздательство политической литературы, Москва, 1954, ст. 395, 442, ***О.А.Овсепян,*** Государственно-правовые воззрения революционера-демократа Микаела Налбандяна. Историко-филологический журнал АН Армянской ССР, 1988, N 2 (89), ст. 87-88.

դարաբաղցու ասածը չլինի «ըռխին յաշիր»[73]: Անշուշտ անգլիական սահմանադրական կարգերը կատարյալ չեն, բայց այդ կարգերն իրավունք ունեն քննադատելու միայն նրանք, ովքեր (պետությունները) գոնե նրա՝ Անգլիայի չափ ժողովրդավարական են[74]: Սա է Նալբանդյանի մոտեցումը: Մյուս կողմից քննարկելով ավելի ճիշտ ակնարկելով անգլիական՝ պառլամենտական-միապետական և ամերիկյան նախագահական-հանրապետական կարգերը՝ նա իր նկատելի համակրանքն է հայտնում վերջինիս՝ «անթագավոր» կառավարման ձևի նկատմամբ[75]. գտնելով, որ իր համեմատական դեմոկրատիզմով հանդերձ կառավարման անգլիական ձևը զիջում է ամերիկյան՝ ***հանրապետական*** *կարգերին, որն* ***ամբողջ ազգին է հնարավորություն տալիս*** *մասնակցելու երկրի կառավարմանը՝ ի տարբերություն անգլիականի, որը միայն իշխող երկու դասակարգերի (հարուստներ՝ բուրժուազիան, ազնվականությունը և միջին դասը) ազդեցությամբ է շարժվում[76]: «Ազգ ասելով,- գրում է Նալբանդյանը,- հասկացանք և հասկանում ենք անգլիական հասարակության այն բաժինը, որ ուղղակի կամ անուղղակի մասնակից է կառավարության (կառավարմանը, իշխանության ձևավորմանը, իրականացմանը – Մ.Թ.) և որի պոլիտիկական (քաղաքական - Մ.Թ.) իրավունքը խոստովանում է անգլիա-*

---

[73] ***Միքայել Նալբանդյան***, Երկեր, էջ 614:
[74] Նույն տեղում, էջ 614-623 և մյուս էջերը:
[75] Նույն տեղում, էջ 622:
[76] Տե՛ս նույն տեղում:

կան կոնստիտուցիոնը (սահմանադրությունը – Մ.Թ.), որովհետև այդ կոնստիտուցիոնը ***հասարակապետական և ոչ հանրապետական լինելով, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, համորեն ազգի անձն յուր անդամներին չէ տալիս պոլիտիկական իրավունք »***[77] *(ընդգծումներն մերն են – Մ.Թ.):*

Անգլիայում ոչ բոլոր դասակարգերն են մասնակցում իշխանության իրականացմանը, միայն ***առաջին և միջին դասակարգերը*** *(ազնվականությունը և առևտրաարդյունաբերական բուրժուազիան՝ այդ թվում վաճառականությունը ևն), նրանց ձեռքին է իշխանությունը, օրենքը, նրանք են փոխում սահմանադրությունը, օրենքները, երկիրը տանում, իշխանությունն իրականացնում իրենց ցանկացած ուղղությամբ*[78]*: Անգլիայում «Այդ երկու դասակարգի շահին էլ ընդդեմ է և Անգլիո մեջ ամեն փոփոխություն, որ կարող էր շատ թե քիչ սասանեցնել կամ ավելի փոքր, կանգնեցնել բաների ամենօրյա ընթացքը: Եվ այդ երկու դասակարգն բուռն դրական իշխանություն ունի իր ձեռքին, ոչ օրենքը, ոչ գրված կոնստիտուցիոնը և ոչ իսկ թագի արտոնությունքը ազդեցություն ունին նորա վրա. նա փոխում է օրենքը, սրբագրում է սահմանադրությունը, փոխում է և գահակալության հաջորդությունը, ինչպես Հենրիկոս VIII-ի և Վիլհելմ III Օրանժյանի ժամանակ, փոխում է կրոնը, ի վերջո ինքը պառլամենտը և «իշ-*

---

[77] Նույն տեղում, էջ 622:
[78] Տե՛ս նույն տեղում, էջ 622:

խող և իշխեցյալ», ինքը դնում է օրենք և ինքը դարձյալ հնազանդում է նորան. վերստին փոխում է օրենքը և այդ նոր օրենսդրությունը նույն զորություն ունի, ինչ ուներ առաջվանը. մեկ խոսքով, կենդանի սահմանադրություն և կենդանի օրենք անսահման և լրացյալ իշխանությամբ»[79]*:* ***Այսինքն անգլիական՝ ժամանակի ամենաառաջադիմական կարգերի համեմատական դրականի հետ մեկտեղ Նալբանդյանը տեսնում և քննադատում է նաև անգլիական բուրժուական կարգերի՝ պետության և իրավունքի դասակարգային ու շահագործողական բնույթը***[80]*: Ակնհայտ է, որ Նալբանդյանը դրական համարելով, ժամանակի առումով, անգլիական խորհրդարանական միապետությունը՝ ավելի ճիշտ միապետական իշխանությունը խորհրդարանով էապես սահմանափակելու կարգը՝ այնուամենայնիվ* ***գերադասում է «մաքուր» խորհրդարանական հանրապետությունը****՝ մի բան, որն արդեն իրավացիորեն նկատել է պրոֆ. Հ.Հովսեփյանը*[81]*: Սակայն կառավարման ձևը Նալբանդյանի մոտ մեկուսի, ինքնանպատակ՝* ***չոր ու ցամաք,*** *իրավական կոչ-ընկալում չէ: Կառավարման ձևն ինքնին, եթե նույնիսկ այն կոչվում է հանրապետական-խորհրդարանական, էական ոչինչ չի նշանակում: «Եվ քանի որ տնտեսական խնդիրը - այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծ-*

---

[79] Նույն տեղում:

[80] Տե՛ս նաև ***Աշոտ Հովհաննիսյան,*** Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 492-493 և հտ.

[81] Տե՛ս *О.А.Овсепян,* նշվ. հոդվածը, էջ 88:

*ված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեական հարաբերությանց մեջ ազատ չէ, **թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը**, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ **մյուս մասը** մնում է **մուրացիկ**, այնտեղ թագավորում է բռնությունը»[82], **Ակնհայտ է, որ հողի առնչությամբ Նալբանդյանի դատողություններն ընդհանրապես խորհրդանշում են հասարակության նյութական պայմանները՝ տնտեսական հիմքը**: Առանց բավարար նյութական հիմքի չեն կարող լինել ո՛չ արդարացի կառավարման ձևեր, ո՛չ **իրական** ազատություններ, ո՛չ մարդու իրավունքների **իրական** պաշտպանություն, ո՛չ **իրական** կրթություն, լուսավորություն, ևն: Եթե ունեզուրկը՝ նյութական բավարար կենսապայմաններից զրկված մարդկանց հսկայական բազմությունը «…առավոտը զարթնելով պիտի մտածե, թե ի՞նչպես սնանի կամ ի՞նչպես սնուցանե յուր ընտանիքը, որպես թե կարող էր մտածել լույսի կամ խավարի վերա»[83], ապա քաղաքական մերկապարանոց կարգախոսները նման պայմաններում ոչինչ չեն կարող տալ: Կարևորը, վճռորոշը տնտեսական հիմքն է, որի վրա խարսխվում է տվյալ պետական կառույցը, այդպես էր դատում և Գերցենը, որը ևս հանրապետական կառավարման*

---

[82] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, էջ 474 (ընդգծումները մերն են-Մ.Թ.):

[83] Նույն տեղում, էջ 492:

*կողմնակից էր[84], սակայն դարձյալ վճռականը համարում էր ոչ թե ձևը, այլ բուն սոցիալ-տնտեսական հիմքը, որի վրա այն կառուցվում էր. «Պետությունը,- գրում էր Գերցենը,- հին ընկերոջը (Մ.Ա. Բակունինին – Մ.Թ.), հասցեագրված նամակում, չունի սեփական որոշ բովանդակություն. այն հավասարապես ծառայում է ռեակցիային ու ռևոլուցիային, նրան, ում կողմից է ուժը. սա անիվների զուգակցումն է ընդհանուր առանցքի շուրջը. դրանք հարմար է ուղղել այնտեղ կամ այստեղ, որովհետև շարժման միասնությունը (նպատակը - Մ.Թ.) տրված է, որովհետև այն հարած է մեկ կենտրոնի»[85]: Գերցենը, անվարան մերժում էր ֆեոդալամիապետական ձևերը, որովհետև ոչ մի սահմանադրություն, ոչ մի կառավարություն չի կարող ֆեոդալական **տիպի** պետություններում ապահովել ազատությունն ու հավասարությունը[86]: Դրա հետ մեկտեղ նա մերժում էր և բուրժուական տիպի հանրապետական ձևը՝ բուրժուական պառլամենտը համարելով **դատարկ զրուցարան**[87], իսկ ամբողջությամբ վերցրած բուրժուական հասարակական-պետական կարգերը բնութագրում որպես մի հասարակարգի, որտեղ ամեն ինչ՝ թերթերի խմբագրությունները, ընտրական ժողովները, պառլամենտները վերած-*

---

[84] Տե՛ս История политических и правовых учении, Москва, 1983, ст. 364-366.

[85] ***Ա.Ի.Գերցեն,*** Ընտիր փիլիսոփայական երկեր, հ. II, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 381:

[86] Նույն տեղում, էջ 60:

[87] Տե՛ս ***Ա.Ի.Գերցեն,*** Եղելություններ և խոհեր, Գիրք «Բ», Երևան, 1952, էջ 118:

վում են դրամափոխության խանութների ու շուկաների, մի հասարակարգի, որտեղ կյանքը դարձել է մշտական պայքար դրամի համար[88]*:*

Չերնիշևսկին գրում էր, որ ամեն ինչ նորմալ կարող է լինել նաև թագավորության ժամանակ, ***եթե թագավորը ընտրվի ժողովրդի կողմից, վերահսկվի ժողովրդի կողմից և ենթարկվի ժողովրդին, իսկ վատ լինելու՝ ժողովրդին հակառակ գործելու դեպքում ժողովուրդը, ի դեմս համայնքի, կարողանա նրան ասել.*** *«…դո՛ւ, թագավո՛ր, մեզ վրա այլևս թագավոր մի՛ եղիր, դու մեզ համար ցանկալի չես, մենք քեզ փոխում ենք, աստված քեզ հետ, գնա՛, ուր ուզում ես մեզնից հեռու, իսկ թե չգնաս, մենք քեզ բանտ կնստեցնենք և կդատենք քեզ անհնազանդության համար»*[89]*:*

Իհարկե, թե՛ Գերցենը, թե՛ Չերնիշևսկին, և թե՛ Նալբանդյանը կոնկրետ և մանրակրկիտ պետական մոդելներ չեն առաջադրում, նրանց համար կարևորը սկզբունքն է, գաղափարը, որի էությունը մեկն է՝ բացառել ***ոչ միայն ֆեոդալական միահեծանությունը, այլ նաև բուրժուական կեղծ պառլամենտարիզմը, ստեղծել ժողովրդի իրական կարիքներն ու շահերն արտահայտող սոցիալ-տնտեսական հիմքի վրա գործող պետական կառավարման ձևեր՝ կառույցներ:***

Նալբանդյանի և նրա մյուս հայ և ռուս գաղափարակիցների մեծագույն ծառայությունը գիտութ-

---

[88] Տե՛ս նույն տեղում, էջ 114-121:

[89] ***Ն.Գ.Չերնիշևսկի,*** Ընտիր երկեր, էջ 593:

յան՝ այդ թվում, բնականաբար իրավաքաղաքական մտքի պատմության մեջ և հասարակական առաջընթացի ընկալման հարցում, մեր կարծիքով, հիմնական գծերով հանգում է հետևյալին.

Նախ *հասարակական կյանքի, մարդու, մարդկության գոյատևման ելակետը, հիմքը նրա նյութական պայմաններն են, սրա վրա են խարսխված նաև գաղափարական, հասարակական, քաղաքական, իրավական մյուս երևույթները՝ այդ թվում պետությունը և իրավունքը: Այս հարցում Նալբանդյանը և մյուսները ընդհուպ մոտեցել, ավելի ճիշտ հասել են պատմության մատերիալիստական ըմբռնմանը, ըստ որում որոշակի իմաստով,* ***ինքնուրույն****: Պատմության մատերիալիստական ըմբռնումը, սակայն, իր հստակ ձևակերպումն ու զարգացումը ստացավ, ինչպես հայտնի է* ***Մարքսի, Էնգելսի*** *ու նրանց հետագա գաղափարակիցների կողմից:*

Երկրորդ՝ Նալբանդյանն ու նրա գաղափարակիցները հստակորեն առաջադրեցին այն գաղափարը, ըստ որի պետությունը, ժողովուրդը, ազգը ***չի կարելի, նույնացնել****՝ դիտել որպես չտարբերակվող միասնություն: Իմաստային մեկնաբանությունը հետևյալն է. պետությունն իրավա-քաղաքական կազմակերպություն է առանձնացված ժողովրդից. այն կարող է ցանկացած ձևով, ըստ պայմանների, փոխվել ժողովրդի կողմից, եթե հակասում է ժողովրդի շահերին: Այս հարցում միանգամայն արդարացի է նաև* ***ժողովրդի հեղափոխա-***

կան զինված պայքարի իրավունքը՝ եթե այլ ճանապարհ չկա, քանզի ստրկությունը, ճորտությունը, թե՛ արտաքին և թե՛ ներքին բռնությունն անբնական ու անբանական է: Այս առումով օրենքի, իրավունքի ծագման հիմքը ևս Նալբանդյանը համարում է բնական ու բանական օրենքը՝ ըստ որի բոլոր մարդիկ հավասար են արարվել և հավասարապես պետք է օգտվեն բնական ու բանական կեցության՝ բնության ու հասարակության բարիքներից: Արևմտահայ «Մեղու» երկշաբաթաթերթի խմբագիր Հարություն Սվաճյանին 1860թ. դեկտեմբերի 19-ին ուղղված իր նամակում Նալբանդյանը գրում է. «Բնական օրենքը, վսեմակա՜ն օրենք - գերագույն բոլոր մարդկային օրենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին, թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան արարչագործ աստուծո ձեռքից: Մարդկային օրենքը դրվեցավ, թեպետ և շատ անգամ և շատ դիպվածում շեղվելով բնական օրենքից, ի վերա այսր ամենայնի, ընտանեկան կամ ընկերական կյանքի պայմանները սուրբ պահելու համար. այդ օրից սկսած, դատապարտության տակ ընկավ նա, որ հանդգնեցավ մոտենալ ուրիշի իրավունքին, կամ դրժել ընկերական կամ ընտանեկան նվիրական պայմաններին»[90]: Ուրիշ էլ ինչ ելակետի վրա պետք է հենվել՝ առաջադրելով մարդու կողմից մարդու ճնշումը, շահագործումը վերացնելու, բոլոր մարդկանց հա-

---

[90] ***Միքայել Նալբանդյան***, Երկերի լրակատար ժողովածու վեց հատորով, Հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 269:

*վասարության և այլ համամարդկային արժեքներ, եթե ոչ **բանականի ու բնականի**, որը և պետք է **ամրագրվի մարդկային՝ հասարակության, պետության ընդունած օրենքներում: Օրենքի** (արդարացի, բնական) վրա պետք է հենվի ժողովրդի, ազգի կյանքը, առանց այդ օրենքի ազգը չի կարող գոյատևել ու առաջադիմել. «Իրավադատության մեջ է ազգի կյանքը և այս օրենքի վերա միայն կարող է մի ազգ հառաջանալ: Մենք ուսանում ենք ազգերի պատմությունը, բայց շատ անգամ անհասկանալի կմնա մեզ որևէ ազգի պատմության մի երևույթ, եթե ուսած չէինք այդ ազգի օրենսդրությունը, որովհետև օրենսդրության առանցքի վերա կատարում է յուր շրջադարձը մարդկային բարոյական կյանքը: Ինչպես օրենքը, այնպես և կյանքը, ինչպես կյանքը այնպես և պատմությունը: Եթե մի ազգի մեջ չկա օրենք, չկա իրավադատություն՝ համարձակ քարոզում ենք այդ ազգի կյանքը բարբարոսական»[91]: Նալբանդյանը տարբերում՝ օգտագործում է **բնական օրենք և մարդկային օրենք** հասկացությունները[92]:*

*Նալբանդյանն առաջադրում է նաև օրենքի, իրավունքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, իսկ հանցանքը՝ հանցագործությունը պատժելու մեջ տեսնում է ոչ թե **վրեժխնդրություն, այլ ամբողջ հասարակության շահերի պաշտպանություն.** «Օրենքը պատժում է հանցավորը. ասիա-*

---

[91] Նույն տեղում, էջ 269-270:
[92] Տե՛ս նույն տեղում, էջ 270:

ցին տեսանում է այստեղ մի լոկ վրեժխնդրություն, բայց մեք այդ արդարացի հատուցումի մեջ տեսանում ենք հասարակաց իրավունքի պաշտպանություն: Ոչ ոք չէ կարող հանցանք գործել առանց ուրիշի իրավունքը հափշտակելու. ոչ ոք չէ կարող հանցանքը պաշտպանել առանց զրկվածի իրավունքը խեղդելու: Բնական օրենքով, իրավունքների հավասարությունը պահանջում է, մարդկային օրենքի միջնորդությամբ, ընկերական կամ ընտանեկան պայմանների և արտոնությունների պաշտպանությունը: Եվ նա, որ պարծենում է յուր մարդ լինելով, պիտի պաշտպանե իրավադատությունը, որովհետև առանց նորան ինքը այդ մարդը չէ կարող երևիլ և ապրիլ մի ընկերության մեջ»[93]*:* ***Այսպիսով, Նալբանդյանը բնական, արդարացի օրենքից բխող իրավունքը և օրենքի անհրաժեշտությունը տեսնում էր հասարակական կյանքի ներդաշնակ, բնականոն զարգացումը՝ գոյատևումն ապահովելու խնդրում****:* *Այս առումով կարելի է կռահել իհարկե միայն հիպոթեզի ձևով, որ Նալբանդյանը պետության ծագման մեջ տեսնում էր նրա, այսպես կոչված,* ***բնական-պայմանագրային պահը*** *այն առումով, որ պետության և օրենքի՝ իրավունքի անհրաժեշտությունը պայմանավորված է յուրաքանչյուր անհատի՝ դրանով իսկ ամբողջ հասարակության շահերի պաշտպանությամբ: Խնդիրը, ըստ էության, նույն կերպ էր դնում Ն.Գ. Չերնիշևսկին՝ փորձելով բացահայտել իրավունքի, օրենքի ծագումն ու անհրա-*

[93] Նույն տեղում, էջ 271:

ժեշտությունը. «Իր բնությամբ մեկ մարդը մյուս մարդկանց նկատմամբ հակված է բարյացակամորեն (ի տարբերություն Հոբսի “homo homini lupus est” սկզբունքի – Մ.Թ.), բայց ամեն ոք աշխարհում ամենից շատ իրեն է սիրում: Ամեն ոք ուզում է բավարարել իր պահանջմունքները, սակայն բնության առաջարկած միջոցները բոլոր մարդկանց բավարարման համար անբավարար են լինում: Դրանցից էլ մարդկանց միջև առաջանում է թշնամություն, տեղի է ունենում մարդկային բնության մեջ առկա փոխադարձ բարյացակամության խախտում: Շահերի բախումը հասցնում է ընդհանուր համաձայնությամբ այնպիսի կանոնների հաստատման անհրաժեշտությանը, որոնք սահմանում են հարաբերությունները մարդկանց միջև նրանց գործունեության տարբեր ոլորտներում: Ամեն մի հասարակության մեջ անհրաժեշտ են կանոններ պետության կառուցվածքի, մասնավոր անձանց հարաբերությունների համար, այդ կանոնների պաշտպանության համար: Այդպես առաջանում են քաղաքական, քաղաքացիական և քրեական օրենքները: Հասարակության տարբեր վիճակների պայմաններում այդ օրենքների ոգին և չափը կարող են խիստ տարբեր լինել, բայց առանց բանախոհությամբ որոշվող և հանգամանքներին համապատասխան փոփոխվող, այս կամ այն ոգին, այս կամ այն չափն ունեցող օրենքների հասարակությունը չի կարող գոյություն ունենալ, քանի դեռ գոյություն ունի անհամապատասխանություն մարդկային պահանջմունքների

բավարարման միջոցների և իրենց իսկ պահանջմունքների միջև»[94]*: Չերնիշևսկին իրավունքի ծագման հիմքը, որպես սկզբնաղբյուր, տեսնում է նյութական պայմանները. «...օրենքների անհրաժեշտությունը ծագում է մարդկային պահանջմունքների նկատմամբ բավարար միջոցների անհամապատասխանությունից»*[95]*: Պետությունը և իրավունքը անհրաժեշտ են, սակայն դրանք կոչված են արտահայտելու* ***ամբողջ հասարակության շահերը****, եթե պետությունը այդպիսին չէ, ապա այն պետք է* ***փոխվի, վերացվի****՝ փոխարինվի մեկ ուրիշով, այս է հեղափոխական-դեմոկրատների ելակետային մոտեցումը «Ինչի՞ համար են ծագում պետությունը և նրա օրգան կառավարությունը»*[96] *հարցին Չերնիշևսկին պատասխանում է. «Պետությունը, մեր կարծիքով, գոյություն ունի միայն մասնավոր անձանց բարօրության համար»*[97]*: Ի՞նչ է ընկալվում «մասնավոր անձ» հասկացության տակ:* ***Կապիտալի՞ստը, ֆեոդա՞լը, բուրժուա՞ն****: Ո՛չ: «...երկրագնդի վրա մարդկային անձնավորությունից բարձր ոչ մի բան չենք ընդունում» - ասում է Չերնիշևսկին*[98]*: Ոչ թե մասնավոր կամ հանրային սեփականությունը պաշտպանելու համար է (կամ պետք է լինի) պետությունը, այլ անձին՝ մարդուն, քաղաքացուն,*

---

[94] ***Ն.Գ.Չերնիշևսկի***, Ընտիր երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1981, էջ 331:
[95] Նույն տեղում, էջ 335:
[96] Նույն տեղում, էջ 316:
[97] Նույն տեղում:
[98] Նույն տեղում:

պաշտպանելու համար. որպեսզի ճնշում ու շահագործում չլինեն, որպեսզի աղքատ ու հարուստ՝ թեկուզև բացարձակ առումով, չլինեն, ևն ևն:

Մի խոսքով, պետությունը պետք է մարդկանց օգուտի համար, ընդհանուր բարեկեցության համար գոյություն ունենա[99]: Եթե այն այդպիսին չէ, հակասում է իր էության ու ծագման նպատակին, ինչպես արդեն նշեցինք, պետք է վերացվի: Այսպիսին է հեղափոխական-դեմոկրատների մոտեցումը. սա է ողջամիտ մոտեցումը. «Պետությունը պետք է ձգտի նրան, որ հասարակական կյանքի օգուտները հասարակության անդամների միջև բաշխվեն ինչքան հնարավոր է համաչափորեն, իսկ վնասներն ընկնեն նրանց վրա ովքեր ավելի հեշտ կարող են տանել դրանք: Ազգային հարստության տվյալ չափի դեպքում միայն այս կերպ կարելի է մարդկանց ընծեռել առավել մեծ բարեկեցություն»[100]:

Ինչպես մյուս լուսավորիչ. հեղափոխական-դեմոկրատները, Նալբանդյանը ևս ժողովրդին նիրհից հանելու հարցում մեծ տեղ է հատկացնում կրթության, լուսավորության գործին. «Կոմս Էմանուելի օրագրում». «Հիշատակարան»-ում, նա գրում է. «Ազգության մեքենայի-հասարակ ժողովրդի վերանորոգությունը հնարավոր է միայն, գիտակցություն տնկելով նորա մեջ: Իսկ գիտակցությունը բխում է լուսավորութենից»[101]: Իսկ լուսավորության տարածման գործում՝ կենտրոնական դեր պետք է

---

[99] Նույն տեղում, էջ 317:
[100] Նույն տեղում, էջ 327-328:
[101] ***Միքայել Նալբանդյան,*** Երկեր, էջ 391:

*խաղան ազգային դպրոցները[102]: Սակայն լուսավորության գործը իրական հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ **առաջնային** ելակետային հիմքը՝ պայմանը, նյութական հիմքն է՝ քանզի. «ստրկության մեջ, աղքատության մեջ չկա և չէ կարող լինել լուսավորություն»[103]: Քանզի «…մարդը, հառաջ քան պիտի գոյանա, հառաջ քան թե գոյանալուց հետո պիտի ապրի, հառաջ, քան թե պիտի քննե և իմաստասիրե յուր անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և հառաջ քան թե պիտի մտածե և հոգաբարձու լինի յուր ապագայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարոտ է նյութի»[104]: Նյութի ընկալումը՝ հասարակության նյութական պայմանների առաջնայնությունը, Նալբանդյանի մոտ ինչպես արդեն երևում է, չի գռեհկացվում: Նյութական պայմանները կարևոր առաջնային են, սակայն դրանք չպետք է դարձնել պաշտամունք (ինչպես օրինակ բուրժուաների, կապիտալիստների, վաշխառուների մոտ): «Ի՞նչ է մարդկային կյանքի խորհուրդը, մի՞ թե լավ ուտել, լավ խմել, լավ հագնել, փառավոր ապրել, հարստություն ճարել, փառք ու պատիվ ստանալ. մի՞ թե մարդը չունի մի բարոյական խորհուրդ յուր կյանքում, մի՞թե այդ բանի համար է ստեղծել մեզ աստված, մի՞թե Քրիստոս մեռավ, որ հարստություն և փառք պարգևե մարդկության, քա՛վ լիցի. հեռի՜ այսպիսի մոլորություն: Մարդը անմահ է ստեղծված. նա յուր կյանքում պիտո է նմանի*

---

[102] Տե՛ս նույն տեղում:
[103] Նույն տեղում, էջ 492:
[104] Նույն տեղում, էջ 493:

աստուծո, որ մահից հետո ժառանգե նորա երկնային արքայությունը: Աստուծո նմանելու համար պիտո է լինել առաքինի և բարոյական մարդ, որովհետև աստված աղբյուր է և կենտրոն ամենայն առաքինության և բարոյականության. իսկ մարդը հարստություն ճարելով, փառք պատիվ գտանելով չէր կարող առաքինի դառնալ, նորա առաքինության շարժարանը գտանվում է դաստիարակության և կրթության մեջ: Մարդը պարտական է դաստիարակվիլ, կրթվիլ, հետո, սոցա ազդեցությամբ առաքինանալով, աստուծո նմանիլ և վայելել մի հոգեկան և հավիտենական երջանկություն»[105]*: Հասարակական բացասական երևույթների՝ մարդու կողմից կատարվող բացասական երևույթների՝ հակահրավական, հակաբարոյական արարքների պատճառը բացատրվում է ոչ թե «ինքն իրենից» այլ այն պայմաններով, որոնցում գործում է մարդը հասարակական կյանքի իրական պայմանների մեջ*[106]*: «Շատ փորձեր և օրինակներ ստորասաբար պատասխանում են այս խնդրին, այո՛ և իմ սեփական նկատողությունքը, ուրիշ շատ մարդերի նկատողութեենների հետ, դրականապես հաստատում են այս բանը, թե մարդը ծնանելով չունի յուր մեջ առաքինության կամ վատթարության սկիզբն կամ տարր, և հոգու այդ ունակությունքը հետևանք են նորա լավ կամ վատ շրջակայքի ազդեցութենից»*[107]*: Այս առումով պետք է մոտենալ նաև Նալբանդյանի ընկալ-*

[105] Նույն տեղում, էջ 246-247:
[106] Տե՛ս նույն տեղում, էջ 239:
[107] Նույն տեղում, էջ 239:

*մանը **հանցագործության էթիմոլոգիայի** հարցում. «Մտանենք այժմ բարոյական աշխարհը և առնունք մի առաքինի մարդու զավակ, որի բնավորությունը կերպարանագործված չէր, դեռևս, և ձգենք այդ մանուկը ավազակների և գողերի ընկերության մեջ, մի քանի տարի վերայովը անցանելուց հետո հանդիպելով նորան, արդյոք տեսանելու չէի՞նք, որ նա ևս դարձել էր մի արյուն կզակ գող և ավազակ...»[108]:*

*Մարդու դրական ձևավորման գործում սկզբնական, առաջնային դերը Նալբանդյանը հատկացնում է սկզբնական **ընտանեկան դատիարակությանը**[109]: Ապա կարևոր է **կրթությունը** (դպրոցը, ինստիտուտը ևն), **ընկերությունը, շրջապատը**՝ ավելի լայն իմաստով[110]:*

Միայն պատժի սպառնալիքով չի կարելի արդյունքի հասնել հանցագործությունների դեմ պայքարում: Դրան հասնելու համար անհրաժեշտ են բավարար պայմաններ հասարակական կյանքում՝ նյութական, բարոյական, ևն[111]: Ըստ որում, այստեղ ևս առաջնայինը տնտեսական-նյութական հիմքն է: Չի կարելի մարդուն, հասարակությանը աղքատ, սոված պահել և ասել գողություն մի՛ արա...

Հատկապես իր «Երկու տող» պամֆլետում Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում հայ եկեղեցու գաղափարախոսությունը, եկեղեցու

---

[108] Նույն տեղում, էջ 240-241:
[109] Նույն տեղում, էջ 241-245:
[110] Նույն տեղում, էջ 241-247:
[111] Տե՛ս նույն տեղում, էջ 519-522:

գործունեության բացասական կողմերը՝ մասնավորապես աշխարհիկ լուսավորության գործին խոչընդոտելու և այլ բացասական կողմերի համար[112]: «Այլուն է կաթում մեր սրտից, երբ նայում են ազգի ամայի և ամուլ կյանքի վերա. աղեխարշ սրտմտում ենք դարձյալ, տեսանելով, որ այս անգործության, ծայրացյալ թշվառության և կարելի եղածի չափ ստրկության մեջ, հայերը դատապարտված են օտարի գավազանի հետ, ենթարկվիլ նաև յուր եկեղեցականների հարստահարության»[113]: Նալբանդյանը «Հիշատակարան»-ում հատկապես դառնությամբ է նշում քրիստոնեությունը Հայաստանում բռնի տարածելու հետևանքով հայ հնագույն մշակույթի, մասնավորապես գրի ու դպրության ոչնչացման հանգամանքը[114] հանգամանք, որը խավարի մեջ թողեց մեր պատմության մի հսկայական ժամանակաշրջան:

Մ.Մ.Թելունց

Իրավագետ, պատմական գիտ. թեկնածու,

իրավագիտության դոցենտ

02.11.2019թ.

---

[112] Տե՛ս նույն տեղում, էջ 442-448 նն:
[113] Նույն տեղում, էջ 448:
[114] Տե՛ս նույն տեղում, էջ 403-404: